

## Ինչպե՞ս արբիտրաժ վարել Հայաստանում<sup>1</sup>:

### Ներածություն

2006թ.-ի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱԺ-ը ընդունեց նոր օրենք Առևտրային արբիտրաժի մասին (ՀՀ Օրենք N. ՀՕ-55-Ն, այսուհետ՝ Արբիտրաժի Օրենք՝ կամ Արբիտրաժի մասին ՀՀ Օրենք): Արբիտրաժի Օրենքը արդիական է և համապատասխանում է ընդունված միջազգային չափանիշներին: Այն առաջադրում է ողջամիտ հենք Հայաստանում տեղական և միջազգային արբիտրաժի վարման, ինչպես նաև այլ պետություններում կայացված արբիտրաժային որոշումների կատարման համար:

Արբիտրաժի Օրենքը հիմնված է Միջազգային առևտրային արբիտրաժի մասին Մոդելային օրենքի վրա (UNCITRAL Մոդելային օրենք), որը կազմվել է ավելի քան 20 տարի առաջ ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) կողմից: Առնվազն 50 պետություն, այդ թվում նաև Հայաստանը, ընդունել են արբիտրաժի մասին ազգային օրենքներ UNCITRAL Մոդելային օրենքի հիման վրա:

Արբիտրաժի Օրենքը կազմվել է այնպես, որպեսզի բացառի որոշ բարդություններ և անորոշություններ, որոնք առկա էին նախորդ օրենքում: Հնուտ օգտագործման և կիրառման պարագայում, Արբիտրաժի Օրենքը Հայաստանում առևտրային վեճերի լուծման գործուն և արդյունավետ համակարգի հիմք կդառնա:

Այս գրքույկը բացատրում է Արբիտրաժի մասին ՀՀ Օրենքի և ներկայացնում թե ինչպես մարդիկ կարող են այն օգտագործել առևտրային վեճերը արդար և արդյունավետ լուծելու համար՝ առանց դատարանի միջամտությանը դիմելու: Գրքույկի եզրափակիչ հատվածը ներկայացնում է, թե ըստ գործող օրենքի ինչպես է հնարավոր լուծել առևտրային վեճերը միջնորդության կամ վեճերի լուծման այլընտրանքային եղանակների միջոցով՝ առանց դատարանին կրկին դիմելու:

---

<sup>1</sup> Այս ձեռնարկը պարտաստվել է USAID-ի աջակցությամբ, “Առևտրային իրավունք և տնտեսական կարգավորում” ծրագրի շրջանակներում, Bearing Point-ի և Միջազգային իրավական ինստիտուտի գլխավոր խորհրդական Մարկիետ Բալլի կողմից: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Առլեքս Ինտերնեյշնլ ՓԲԸ-ին ձեռնարկի պատրաստման գործում իր ներդրած *pro bono* աշխատանքի համար:

Արբիտրաժի իրավական հենքը կազմող օրենքները, պայմանագրերը և կանոնները զետեղված են հավելվածներում: ՀՀ Առևտրային արբիտրաժի մասին օրենքը ներկայացված է Հավելված Ա-1-ում:

## Արբիտրաժ

### 1.1 Ինչպես է արբիտրաժն իրականացվում. Հիմնական սկզբունքները

Արբիտրաժը գործընթաց է, որը հնարավորություն է տալիս կողմերին, ըստ համաձայնության, առկա վեճերի հարցով դիմել չեզոք երրորդ կողմի (մեկ կամ ավելի, որոնք չեն հանդիսանում դատարան) վերջնական և պարտադիր որոշման կայացման համար: Արբիտրաժը հիմնված է կողմերի համաձայնության վրա. կողմերը դիմում են արբիտրաժի միայն փոխադարձ համաձայնության դեպքում: Արբիտրաժի մասին ՀՀ և այլ պետությունների օրենքների համաձայն, եթե կողմերը գրավոր համաձայնության են գալիս առկա վեճը, կամ ապագա հնարավոր վեճերը արբիտրաժով լուծելու մասին, ապա նրանք իրավասու չեն այդ հարցով որևէ դատարանի միջամտությանը դիմելու:

Ընդհանուր առմամբ, արբիտրներից պահանջվում է վճիռ կայացնել ապացույցների հիման վրա և հետևելով կիրառվող օրենքին, այնպես ինչպես դատարանը կվարվեր: Հնարավոր է, որ կողմերը համաձայնության գան որպեսզի արբիտրները իրենց վճիռը կայացնեն ոչ թե օրենքի, այլ միայն արդարության և հավասարության մեկնաբանումների հիման վրա (ex aequo et bono): Այնուամենայնիվ, այս մոտեցումը սակավ է կիրառվում:

Արբիտրաժի մասին ՀՀ օրենքի և այլ պետությունների արբիտրաժային օրենքների մեծ մասի համաձայն, արբիտրի որոշումը վերջնական և պարտադիր է: Եթե արբիտրը արդար է վարվել և չի խախտել կողմերի համաձայնությամբ իրեն հատկացված լիազորությունների չափը և եթե արբիտրաժի մասին օրենքի այլ կոպիտ խախտում չի եղել, ապա արբիտրալ որոշումը դատարանի կողմից ենթակա է հարկադիր կատարման:

### 1.2 Ինչպես է արբիտրաժն իրականացվում. Արբիտրաժի իրավական հենքը

Հայաստանում արբիտրաժն իրականացվում է ելնելով 6 հիմնական իրավական պարագաներից: Նույն հենքը կիրառվում է բոլոր զարգացած արբիտրաժային համակարգերում:

- 1 Արբիտրաժային համաձայնությունը. Կողմերը պետք է համաձայնվեն արբիտրաժի դիմելու հարցում: Ըստ Արբիտրաժի մասին օրենքի՝ համաձայնությունը պետք է լինի գրավոր:

- 2 Արբիտրաժի վայրում կիրառվող արբիտրաժային օրենքը.  
 Հայաստանում վարվող արբիտրաժների պարագայում, դա Արբիտրաժի մասին օրենքն է: Ընդհանուր առմամբ, օրենքի համաձայն, արբիտրալ համաձայնությունները պարտադիր և անժխտելի են իսկ արբիտրալ որոշումները՝ պարտադիր կիրառելի ու վերջնական:
  
- 3 Դատարաններ. Արբիտրաժի մասին ակտը կարևոր դեր է հատկացնում ՀՀ դատարաններին: Դատարանների պարտականությունն է Արբիտրաժի Օրենքում առաջադրված չափանիշներին համապատասխան կատարել կամ չեղյալ ճանաչել արբիտրալ որոշումները, ինչպես նաև աջակցել և վերահսկել Հայաստանում վարվող արբիտրաժները:
  
- 4 Միջազգային կոնվենցիաներ. Վերջիններս հաստատում են ՀՀ դատարանների պարտականությունները այլ պետություններում վարվող արբիտրաժային հարցերը քննելիս: Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կիրառման մասին Նյու Յորքի կոնվենցիան, 1958թ. (1958թ. Նյու Յորքի Կոնվենցիա) հիմնական միջազգային կոնվենցիան է, որին մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը: Կոնվենցիային միացել են 142 կողմ: Կոնվենցիայի համաձայն, ՀՀ դատարանները պետք է (1) կատարեն այլ երկրներում կայացված արբիտրաժային համաձայնությունները և (2) ճանաչեն ու կիրառեն այլ պետությունների տարածքում կայացված արբիտրաժային որոշումները: Կոնվենցիան կարող էր գտնել Հավելված Ա-2-ում: 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի վերը նշված պահանջները ներառված են Արբիտրաժի մասին ՀՀ Օրենքում, Արբիտրաժի Օրենքի Հոդվածներ 8, 35:
  
- 5 Արբիտրաժային կանոններ. Առևտրային արբիտրաժում հաճախ կիրառվող կանոններից են Առևտրի միջազգային պալատի (“ICC”) (Հավելված Ա-3), Լոնդոնի միջազգային արբիտրաժի դատարանը (“LCIA”) (Հավելված Ա-4), Ամերիկյան արբիտրաժային ընկերակցությունը (“AAA”) (Հավելված Ա-5) և ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (“UNCITRAL”) (Հավելված Ա-6) կանոնները: Այս կանոնները լրացնում են այն բացերը, որոնք կարող է կարգավորված չլինեն կիրառվող արբիտրաժային օրենքներով, քանզի վերջինները սովորաբար արբիտրաժային

գործընթացի միայն հիմնական նվազագույն չափանիշներն են սահմանում:

- 6 Արբիտրաժային հաստատություններ. Կողմերը կարող են համաձայնվել, որպեսզի իրենց արբիտրաժը վարվի ICC-ի, AAA-ի, LCIA-ի կամ այլ հաստատության կողմից: Այս հաստատությունները աջակցում են արբիտրաժի կազմակերպչական հարցերում: Դրանք նաև իրականացնում են այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են արբիտրների նշանակումը, եթե կողմերը դա դեռ չեն արել և կողմնակալության մեջ մեղադրվող արբիտրների բացարկման գործերի լուումը: Հաստատությունները գումար են գանձում իրենց ծառայությունների դիմաց՝ որը հաշվվում է կամ գործընթացին հատկացված ժամաքանակով կամ վիճարկված գումարի չափից ելնելով: Այս վարձավճարները երբեմն կարող են բավականին բարձր լինել: Կողմերը կարող են ընտրել նաև “ad hoc” արբիտրաժ, որի պարագայում վարչական գործերը կատարվում են արբիտրների և կողմերի կողմից՝ առանց արբիտրաժային հաստատության աջակցության: Նման արբիտրաժների պարագայում հաճախ օգտագործվում են UNCITRAL-ի կանոնները:

Արբիտրաժի իրավական հենքը ավելի ամբողջական ծանոթացման համար տեսեք Միջազգային արբիտրաժ. Հիմնադրույթները, Հավելված Բ-1 \*:

### 1.3 Ինչպես է արբիտրաժն իրականացվում. Արբիտրաժի գործընթացը

Արբիտրաժի գործընթացը ճկուն է. ենթադրելով բավականին լայն տիրույթ՝ կողմերը կարող են գործընթացը դարձնել այնքան պարզ կամ այնքան բարդ, որքան որ նպատակահարմար կգտնեն: Կողմերի արբիտրաժային համաձայնությունը հիմնականում ընդգրկում է արբիտրաժային գործընթացին վերաբերող դրույթներ: Եթե կողմերը իրենց համաձայնության մեջ չեն անդրադարձել արբիտրաժի գործընթացին, ապա կողմերի ընտրած արբիտրաժային կանոնները գուցե լրացնեն այս բացը: Եթե չեն լրացնում այդ բացը, ապա փորձառու արբիտրները հիմնականում կջանան իրենց վարած արբիտրաժը դարձնել հնարավորինս պարզ և արագ:

Թեպետ արբիտրաժի գործընթացները կարող են որոշակիորեն տարբերվել ըստ արբիտրաժային տարբեր կանոնների, սովորաբար արբիտրաժային գործընթացները ընդգրկում են հետևյալ փուլերը.

---

\* © Markham Ball, 2007

- 1 Հայց ու պատասխան. Կողմերից մեկը (հայցվորը) արբիտրաժային հաստատությանը կամ մյուս կողմին ներկայացնում է արբիտրաժի գրավոր հայց: Հայցը ներկայացվում է ըստ ընտրված արբիտրաժային կանոնների: Դիմացի կողմը (պատասխանողը) ներկայացնում է գրավոր պատասխան և, եթե ցանկանում է, առաջադրում հակընդդեմ հայց:
- 2 Արբիտրների նշանակումը. Մեկ կամ երեք արբիտրներ կնշանակվեն կողմերի կամ արբիտրաժային հաստատության կողմից, ըստ կողմերի համաձայնության կամ ըստ ընտրված արբիտրաժային կանոնների: Լավ կազմված արբիտրաժային վերապահումը կհաստակեցնի արբիտրների քանակը և նշանակման կարգը:
- 3 Փաստաթղթերի ներկայացումը. Յուրաքանչյուր կողմ կարող է մյուս կողմից խնդրել, որ վեճին վերաբերող էական փաստաթղթեր տրանսպորտի: Փաստաթղթերի փոխանակումը կարող է կատարվել կողմերի համաձայնությամբ կամ, կախված առկա պայմաններից և ընտրված արբիտրաժային կանոններից, կարող է պահանջվել արբիտրների կամ դատարանի կողմից:
- 4 Լսում. Յուրաքանչյուր կողմ իրավասու է լսմանը արբիտրաժային տրիբունալին իր փաստարկները ներկայացնել, եթե կողմերը այլ համաձայնության չեն հասել: Լսմանը յուրաքանչյուր կողմ ներկայացնում է փաստաթղթային ապացույցներ, և վկայություններ են ներկայացվում: (Սակայն կողմերը որոնք ցանկանում են արագացնել գործընթացը կարող են համաձայնության գալ, որ արբիտրները վեճը լուծելիս հիմնվեն միայն փաստաթղթերի վրա, առանց բանավոր վկայությունների):
- 5 Հիմնավորումները. Եթե արբիտրաժը ներառում է օրենքի կամ փաստի բարդ հարցեր, ապա կողմերը կարող են համաձայնվել ներկայացնելու գրավոր զեկուցագրեր (հուշագրեր), կամ արբիտրները կարող են պահանջել այդ զեկուցագրերը:
- 6 Որոշումներ. Սովորաբար արբիտրները իրենց որոշումները կներկայացնեն գրավոր` նշելով նման որոշման կայացման պատճառները:

Թեպետ նմանատիպ գործերի արբիտրաժը միտում ունի նմանատիպ օրինաչափությունների հետևել, չկա համընդհանուր կիրառելի ձևաչափ: Կողմերը լայն ազատություն ունեն կազմելու և համաձայնության գալու իրենց

ընտրած արբիտրաժի ընթացակարգի շուրջ: Եթե այդ ընթացակարգը հաջող կազմվի, ապա յուրաքանչյուր կողմ հնարավորություն կստանա ազատ և արդար ներկայացնելու իր փաստարկներն ու հիմնավորումները և վերջնական ու պարտադիր կիրառելի որոշման հասնելու ողջամիտ ժամանակում և ողջամիտ ծախսով:

#### 1.4 Ինչպես է արբիտրաժն իրականացվում. ՀՀ դատարանների դերը

Այլ պետությունների արբիտրաժի մասին ժամանակակից օրենսդրության նման, Առևտրային արբիտրաժի մասին ՀՀ օրենքը (Հավելված Ա-1) նույնպես ազգային դատարաններին վերապահում է որոշակի լիազորություններ և պարտականություններ, որոնք առանցքային են ազգային արբիտրաժի համակարգի հաջողության համար: Սրանք ներառում են հետևյալ լիազորությունները.

- 1 Կատարել արբիտրաժային համաձայնությունները. Եթե կողմերից մեկը վավեր արբիտրաժային համաձայնությամբ կարգավորվող վեճով դիմում է դատարան, ապա վերջինս, մյուսի կողմի հայցի հիման վրա, պետք է երկու կողմերի վեճը հղվի արբիտրաժի: Եթե կողմերից մեկը համաձայնվել է վեճը լուծել արբիտրաժով, բայց այնուհետև որոշում է դատարան դիմել, ապա վերջինս հայցը պետք է թողնի առանց քննության: Այն պետք է կատարի կողմերի արբիտրաժային համաձայնությունը և վեճը հանձնի արբիտրաժի: Ըստ օրենքի՝ դատարան պարտավոր է կիրառել օրինավոր վերապահումը (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 8, տեսեք նաև ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (Քաղաքացիական դատավարության օրենսգիրք), Հոդվածներ 91, 92, 103): Դրա հետ մեկտեղ, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքի 18-րդ հոդվածը լիազորում է դատարաններին, կողմերի համաձայնությամբ, արբիտրաժի հանձնել գույքային վեճերը նախքան վճիռ կայացնելը:
- 2 Կատարել արբիտրաժային որոշումները. Արբիտրաժի Օրենքի համաձայն, դատարանը պետք է կատարի Հայաստանում կամ 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի անդամ պետությունում կայացված արբիտրաժի որոշումները, բացառությամբ որոշ դեպքերի, որոնք նշված են Արբիտրաժի Օրենքում (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 35): Օտարերկրյա պետություններում կայացված արբիտրաժային որոշումների առնչությամբ, Արբիտրաժի Օրենքը ներառում է Օտարերկրյա պետությունների արբիտրաժային որոշումների ճանաչման և կիրառման մասին 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի 3-րդ հոդվածը (Հավելված Ա-2): Դրա հետ մեկտեղ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247.6, 247.7 հոդվածները նախատեսում են, որ ՀՀ դատարանները պետք է ճանաչեն օտարերկրյա պետության

արբիտրաժային որոշումները եթե վերջինս բավարարում է համապատասխան միջազգային պայմանագրերի պահանջները:

- 3 Տեղական արբիտրաժային որոշումները չեղյալ ճանաչել, (որոշումներ, որոնք կայացվել են այն երկրում, որտեղ գտնվում է չեղյալ ճանաչող դատարանը) կամ մերժել օտարերկրյա պետություններում կայացված արբիտրաժային որոշումների ճանաչումն ու կիրառումը, եթե որոշումները և դրանց կայացման ընթացակարգերը չեն համապատասխանում ազգային և միջազգային իրավական չափանիշներին (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 34, 36): Արբիտրաժի Օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված չեղյալ ճանաչելու հիմքերը ամբողջությամբ համապատասխանում են 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված հիմքերին:
- 4 Արբիտրաժային տրիբունալի իրավասության մասին որոշում կայացնել. Կողմերից մեկի հայցի հիման վրա, դատարանը կարող է որոշել, որ տվյալ վեճի վերաբերյալ առկա չէ վավեր արբիտրաժային համաձայնություն, կամ ենթադրվող համաձայնությունը վավեր չի կայացվել, կամ որովհետև տվյալ համաձայնությունը չի վերաբերում առկա վեճին կամ նրանում ներգրավված կողմերին: Եթե վեճի հարցով վարույթ է ընթանում արբիտրաժային տրիբունալում, ապա տվյալ տրիբունալի իրավասության բացարկման հայտը պետք է նախ ներկայացվի արբիտրաժային տրիբունալին, և եթե այն մերժվում է տրիբունալի կողմից, ապա նոր կարող է բողոքարկվել ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանում (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 16): Արբիտրաժային որոշման կայացումից հետո, տրիբունալի համապատասխան իրավասության բացակայության հիմքի վրա որոշումը չեղյալ ճանաչելու դիմում կարող է ներկայացվել ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանում (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 34(2)(1)(գ) և 34(2)(2)(ա)): Եթե արբիտրաժի հաղթող կողմը պահանջում է արբիտրաժային որոշման կատարումը, ապա պարտվող կողմը, որը ժամանակին առարկություն է ներկայացրել տրիբունալի իրավասության հարցի վերաբերյալ, կարող է պնդել տրիբունալի իրավասության բացակայության հանգամանքը որպես արբիտրաժային որոշման չկիրառման հիմք այն դատարանում, որին դիմել է հաղթող կողմը որոշումը կատարելու հայցով (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 36(1)(1)(գ) և 36(1)(2)(ա)):
- 5 Նշանակել արբիտրներ. Եթե կողմերը համաձայնվել են դիմել արբիտրաժի բայց չեն նախատեսել արբիտրաժային տրիբունալի անդամների նշանակման արդյունավետ կարգ, ապա դատարանին է վերապահվում նշանակումները կատարելու լիազորությունը (Արբիտրաժի Օրենք,

Հողվածներ 11(3)-11(5)): Այնուամենայնիվ, կողմերի ընտրած արբիտրաժային կանոնները սովորաբար նախատեսում են արբիտրների նշանակումը արբիտրաժային հաստատությունների կողմից:

- 6 Հեռացնել արբիտրներին շահադիտական կեցվածքի կամ կողմանակալության համար. Ըստ Արբիտրաժի Օրենքի՝ միայն ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանին է վերապահված այս իրավասությունը (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 13(3)): Սովորաբար, դատարանները կիրառում են այս իրավասությունը եթե կողմերի ընտրած արբիտրաժային հաստատությունը իր պարտականությունները չկատարի:
- 7 Չեղարկել հայցի ապահովման միջոցներ. նախքան արբիտրաժի սկիզբը կամ արբիտրաժային վարույթի ընթացքում ստատուս քվոն պահպանելու համար (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 9, Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդ. 97(1)): Չեղարկվելիք ապահովման միջոցները ներառում են վիճարկվող գույքի առգրավումը կամ սառեցումը : Եթե արբիտրները որոշում են հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել, նրանց որոշումը կարող է կիրառվել ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանի կողմից (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 17(3)):
- 8 Դատական աջակցությունն ապացույցներ եւ վկայություն ձեռք բերելիս. Կողմերը այս հարցով պետք է դիմեն ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարան (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 27):

Դատարանների դերի ավելի մանրամասն վերլուծության համար տեսեք 'The Essential Judge' հոդվածը (Հավելված Բ-2):

#### 1.5 Ինչպես է արբիտրաժն իրականացվում. Արբիտրաժային վերապահման կիրառելիության վարկածը.

Ըստ Արբիտրաժի Օրենքի և այլ ժամանակից օրենքների՝ դատարանների դերը կարևոր է, բայց սահմանափակ: Այդ պատճառով, Արբիտրաժի Օրենքի 5-րդ հոդվածում նշվում է, 'Արգելվում է որևէ դատական միջամտություն սույն օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի':

Ինչպես վերը նշվեց, դատարանը իրավունք չունի չեղյալ ճանաչելու վճիռը, կամ մերժի նրա ճանաչումը և կիրառումը որևէ հիմքով բացառությամբ

---

\* © Markham Ball, 2007

Արբիտրաժի Օրենքի 34(2) և 36(1) հոդվածներում նախատեսված դեպքերի:  
Արբիտրաժային որոշումը չի կարող չեղյալ ճանաչվել օրենքի սխալ կիրառման  
կամ հիմնավորող ապացույցների բացակայության պատճառով:

Ավելին, այն պարագաներում, որ օրենքը բացահայտ լիազորում է դատարանին  
չեղյալ ճանաչելու կամ մերժելու որոշման ճանաչումն ու կիրառումը,  
դատարանը հիմնականում այս իրավասությունները տառացի է մեկնաբանում:  
Այսպիսի մոտեցում են ցուցաբերում նաև այլ երկրների դատարաններ, որտեղ  
ընդունվել են արբիտրաժի ժամանակակից օրենքներ: Այս դատարանները  
արբիտրաժային որոշումները վերանայելիս կամ ճանաչելիս ու կիրառելիս  
կամ արբիտրաժային վերապահումը մեկնաբանելիս առաջնորդվում են  
արբիտրաժային վերապահման կիրառելիության վարկածով: Վիճահարույց  
պահերին, դատարանները միտում ունեն կատարելու որոշումը և վավեր  
ճանաչելու արբիտրաժային վերապահումը: Այս վարկածը  
համապատասխանում է UNCITRAL Մոդելային օրենքի, որի վրա հիմնված է  
Արբիտրաժի Օրենքը, և 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի, որի անդամ է ՀՀ-ն,  
նպատակին և պատմությանը:

Արբիտրաժային որոշումների ու համաձայնությունների կիրառելիութեան  
վարկածը նպաստում է կողմերի մտադրությունների պահպանմանը, որով  
համաձայնվել են դիմելու արբիտրաժի: Տվյալ կողմերը շահագրգռված են  
այնպիսի ընթացակարգով, որի միջոցով արդյունքի կհասնեն հնարավորինս  
արագ և արդյունավետ: Նրանք ուզում են, որպեսզի որոշումը լինի վերջնական  
և վեճը լուծի վերջնականապես: Եթե արբիտրաժի դիմելու ռիսկը կայանում է  
նրանում, որ որոշ գործերում արբիտրաժային տրիբունալի որոշումը կարող է  
չհամապատասխանել այն վճռին, որը գուցե դատարանը կամ վերաքննիչ  
դատարանը կայացներ, ապա կողմերը, ղեկավարվելով իրենց խելամիտ  
դատողությամբ՝ հաճախ որոշում են դիմել այդ ռիսկին:

Մույն վարկածը մասնավորապես կիրառվում է օտարերկրյա  
պետություններում կայացված արբիտրաժի և արբիտրաժային որոշումների  
պարագայում: Ըստ Արբիտրաժի Օրենքի, ինչպես նաև 1958թ. Նյու Յորքի  
Կոնվենցիան վավերացրած այլ պետությունների օրենքների համաձայն՝  
դատարանը պետք է ճանաչի և կիրառի օտարերկրյա պետություններում  
կայացված արբիտրաժային որոշումը, բացի Կոնվենցիայում և Արբիտրաժի  
Օրենքում նշված սահմանափակ հիմքերի առկայության դեպքում (Արբիտրաժի  
Օրենք, Հոդ. 36(1)): Այս հոդվածի շարադրանքը բառացիորեն վերցված է 1958թ.  
Նյու Յորքի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթից:

1997 թվականից Հայաստանն ընդգրկված է թվով 150-ի հասնող այն երկրների ցուցակում, որոնք վավերացրել են 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիան<sup>2</sup> և ավելի քան 50 երկրների շարքում, որոնց արբիտրաժային օրենքները հիմնված են UNCITRAL Մոդելային օրենքի վրա: UNCITRAL Մոդելային օրենքից վերցված Արբիտրաժի Օրենքի դրույթները և Կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս ՀՀ դատարանները կարող են հաշվի առնել այլ պետությունների դատարանների որոշումները, որոնք առնչվում են նույն դրույթի մեկնաբանմանը: Այս դատարանները, գրեթե առանց բացառության, կիրառել են վերապահման կիրառելիության վարկածը Կոնվենցիան և իրենց ազգային օրենքները մեկնաբանելիս:

## 2 Արբիտրաժի առավելություններն ու թերությունները դատավարության նկատմամբ

### Առավելություններ

- 1 Արբիտրաժը ճկուն է: Կողմերը և արբիտրները ունեն լայն իրավասություններ ընթացակարգը կազմելիս:
- 2 Երբ կողմերը համաձայնվում են դիմել արբիտրաժի, նրանք կարող են նախօրոք որոշել արբիտրաժի անցկացման վայրը և կիրառվող կանոնները:
- 3 Լավ կազմակերպված արբիտրաժը համեմատաբար արագ արդյունքներ է ապահովում:
- 4 Արբիտրաժը համեմատաբար էժան է: Մեծ և բարդ գործերի ժամանակ, սակայն, ծախսերը զգալի կարող են լինել: Իրավաբանների, արբիտրների և արբիտրաժային ինստիտուտի ծառայությունները կարող են վճարովի լինել: Հնուտ կազմված արբիտրաժը կարող է այս ծախսերը նվազագույնի հասցնել:
- 5 Արբիտրաժը գաղտնի է: Լսումները բաց չեն հանրության համար, իսկ արբիտրաժային որոշումները և այլ փաստաթղթեր հիմնականում գաղտնի են պահվում:
- 6 Կողմերի ձեռքում է գտնվում արբիտրների նշանակման հարցը: Եթե ճիշտ ընտրություն կատարեն, հավանականությունը բարձր կլինի, որ

---

<sup>2</sup> ՀՀ ԱԺ Որոշում Ն-210-1 “Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին կոնվենցիային միանալու մասին”, 18 նոյեմբերի 1997 թվականի

գործը կվարվի այնպիսի արբիտրների կողմից, որոնք ունեն համապատասխան որակավորում:

7. Ըստ Արբիտրաժի Օրենքի՝ արբիտրաժային որոշումները վերջնական և պարտադիր կատարման ենթակա ու չեն կարող չեղյալ ճանաչվել դատարանի կողմից՝ բացառությամբ Արբիտրաժի Օրենքում նշված սահմանափակ դեպքերի (Արբիտրաժի Օրենք Հոդ. 35(1)):

#### Թերություններ

1. Քանի որ արբիտրաժի ընթացակարգերը հիմնականում ավելի պարզ և ճկուն են լինում քան դատավարությանը, կարող է ապացույցներ ընդունվեն որոնք դատավարության ժամանակ ընդունելի չէին լինի:
2. Քանի որ արբիտրաժում ապացույցների բացահայտման հնարավորությունները ավելի սահմանափակ են, կողմերը հնարավոր է չկարողանան իրականացնել փաստերի հետազոտություն այն խորությամբ, որը հնարավոր կլիներ դատավարության դեպքում: Ավելին, միայն դատարանը կարող է պահանջել կողմերից, այդ թվում նաև երրորդ կողմերից, ապացույց ներկայացնելու: Թեպետ որոշ արբիտրաժային կանոնների և օրենքների համաձայն արբիտրները կարող են պահանջել երրորդ կողմերից ապացույցների տրամադրումը կամ վկայություն տալը, այնուամենայնիվ միայն դատարանը կարող է պարտադրել երրորդ կողմին բավարարել նման պահանջ (Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդվածներ 49, 65): Պրակտիկայում, սակայն, արբիտրաժի և դատավարության պարագաներում ապացույցների ներկայացումը գրեթե համարժեք է լինում: Որոշ արբիտրներ նույնիսկ կարող է ավելի նպատակադրված լինեն փաստաթղթերի ներկայացման հարցում քան շատ դատավորներ:
3. Քանի որ արբիտրաժային որոշումները ենթակա չեն բողոքարկման՝ օրենքի սխալ կիրառումը կամ փաստային եզրակացությունների ոչ-բավարար հիմնավորումը ուղղման ենթակա չեն: Սակայն հիմնական պատճառներից մեկը, որ կողմերը համաձայնվում են դիմել արբիտրաժի այն է, որ արբիտրաժը վեճերը լուծում է ավելի արագ և վերջնականապես: Այս առավելությունը շատերի համար ավելի կարևոր է քան օրենքի կիրառման կամ փաստային սխալները ուղղելու հնարավորությունը ժամանակատար բողոքարկման գործընթացի միջոցով:
4. Քանի որ արբիտրաժային որոշումները համարվում են գաղտնի, դրանք դատարանների որոշումների պես չեն կարող ծառայել որպես նախադեպ:

5. Արբիտրաժի արդյունավետությունը մեծ հաշվով կախված է արբիտրի կամ արբիտրների հմտությունից: Եթե արբիտրաժը գտնվում է անփորձ կամ ոչ նպատակալաց արբիտրի ձեռքերում, ապա կողմերը կարող են դժվարանալ իրենց փաստարկները պատրաստելիս և ներկայացնելիս, իսկ արբիտրաժային ընթացակարգը կարող է բավականին երկար տևել: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում նույն դիտարկումը կարելի է կատարել նաև դատական ընթացակարգերի վերաբերյալ:

### 3 Արբիտրաժային համաձայնության կամ վերապահման ձեւակերպումը.

Լավ ձեւակերպած արբիտրաժային համաձայնությունը կամ վերապահումը նվազագույնը պետք է սահմանի. (1) կիրառվելիք արբիտրաժային կանոնները, (2) արբիտրների քանակը, (3) արբիտրների նշանակման կարգը, և, որը հույժ կարևոր է, (4) արբիտրաժի անցկացման վայրը: Նախատրեւի է նշել նաև (5) արբիտրաժի վարման լեզուն:

Համաձայնությունը կամ վերապահումը արհրաժեշտ չէ երկար լինի: Վերը նշված հինգ դրույթներից որոշները, օրինակ՝ արբիտրների քանակը և նշանակման կարգը, հաճախ նախատեսվում են կողմերի ընտրած արբիտրաժային կանոններով: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում կողմերը հնարավոր է ցանկանան փոփոխել այդ կանոնների որոշ դրույթներ: Սովորաբար նրանց տրվում է այդ հնարավորությունը:

Բոլոր հիմնական արբիտրաժային կանոնները ներառում են արբիտրաժային վերապահումներ (տեսեք Հավելվածներ Ա-3, Ա-4.1, Ա-5, Ա-6 սկզբնամասում ներկայացված վերապահումները): Շատ դեպքերում, եթե կողմերը պարզապես ընդգրկեն նման արբիտրաժային վերապահում իրենց համաձայնության մեջ, ապա դրանով կհաստատեն արբիտրաժային բավարար ընթացակարգ:

Արբիտրաժային վերապահման ուշադիր պատրաստման դեպքում դատողություններ են կատարվում, թե ինչպես կարելի է սովորական վերապահումները համալրել կամ փոփոխել առկա գործարքի պայմաններին համապատասխան, որպեսզի առավելագույնս բավարարվեն կողմերի սպասելիքները: Այս գործընթացի հավելյալ վերլուծության համար, տեսեք Հավելված Բ-3, “Drafting an Arbitration Clause”:

Խելամիտ է նաև կիրառվող օրենքը՝ վերապահման ներառումը պայմանագրի արբիտրաժային վերապահման մեջ կամ առանձին վերապահումով: Նման

---

\* © Markham Ball, 2007

վերապահումը նախատեսում է, թե որ օրենսդրության համաձայն են որոշվելու կողմերի նյութական իրավունքները, օրինակ՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները վիճահարույց վաճառքի կամ ներդրման պայմանագրի պարագայում:

Կիրառվող նյութական օրենքը պարտադիր չէ, որ լինի այն պետության օրենսդրությունը, որտեղ իրականացվում է արբիտրաժը: Օրինակ, կողմերը կարող են համաձայնվեն արբիտրաժը Հայաստանում իրականացնելու հարցում (որի արդյունքում արբիտրաժային ընթացակարգը ենթակա կլինի Արբիտրաժի Օրենքին), բայց ընտրել Անգլիայի օրենսդրությունը որպես կիրառվող նյութական օրենքը, կամ հակառակը:

#### 4 Արբիտրաժի վերաբերյալ հարց ու պատասխան

##### 4.1 Գործարքի ո՞ր փուլում է նախընտրելի, որ կողմերը կայացնեն արբիտրաժային համաձայնություն:

Արբիտրաժային համաձայնությունների մեծ մասը ներառված են գործարքի հիմնական պայմանագրում իբրև վերապահումներ, որոնց շուրջ համաձայնություն է կնքվում գործարքի սկզբում: Հնարավոր է, որ կողմերը, որոնք իրենց հիմնական պայմանագրում չունեն արբիտրաժային վերապահում, վեճի ծագման դեպքում համաձայնվեն այդ հարցով դիմել արբիտրաժի: Այնուամենայնիվ, սա կարող է բարդություններ առաջ բերել: Հնարավոր է, որ այս փուլում այն կողմը, որն ամենայն հավանականությամբ ճանաչվելու որպես պայմանագիրը խախտած կողմ, չլինի նույնքան շահագրգռված գործը արագացված ընթացակարգով քննելու, որքան որ կլինի գործարքի սկզբում, երբ որևէ կողմ չէր կարող կանխատեսել, թե ինչպիսի վեճեր է հնարավոր ծագեն, կամ թե որ կողմը կլինի հայցվորը:

##### 4.2 Ինչպես են պայմանագրին առնչվող վեճերը հարթվում եթե կողմերը տվյալ պայմանագրում ոչինչ չեն նշել վեճերի հարթման վերաբերյալ:

Եթե պայմանագրում նշված չէ, թե որտեղ և ինչպես պետք է լուծվեն պայմանագրին առնչվող վեճերը, ապա կողմերը դրանով փաստորեն կատարել են վեճերի հարթման ընթացակարգի ընտրություն: Այս պարագայում համարվում է, որ կողմերը դատական գործընթացի միջոցով պետք է հարթեն ցանկացած վեճ, որը հնարավոր չէ լուծել բանակցությունների միջոցով: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ կողմերը չիմանան, որտեղ և որ դատարանում է կայանալու դատավարությունը: Ամենայն հավանականությամբ, վեճը կլավի այն դատարանում, որը նախընտրում է առավել պահանջկոտ կողմը. նման դատարանը հաճախ գտնվում է տվյալ

կողմի բնակավայրում: Որևէ մեկի համար նախընտրելի չէ լինել պատասխանող կողմ մի դատարանում, որը գտնվում է անձանոթ կամ գուցե վատ տրամադրված դատարանում, հատկապես եթե այն օտար պետության տարածքում է: Մա պատճառներից մեկն է, որ այժմ գլխավոր միջազգային պայմանագրերի մեծ մասն ընդգրկում են վերապահումներ արբիտրաժի վարման չեզոք ատյանների մասին:

4.3 Ի՞նչ եթե կողմերը համաձայնվում են դիմել արբիտրաժի, բայց հետո նրանցից մեկը որոշում է դրա փոխարեն դիմել դատարան:

Այն կողմը, որը դեռ ցանկանում է դիմել արբիտրաժի (հայցվորը) կարող է կողմերի ընտրած արբիտրաժի կանոնների համապատասխան պարզապես մեկնարկել արբիտրաժի գործընթացը՝ արբիտրաժի հայց ներկայացնելով մյուս կողմին կամ արբիտրաժային հաստատությանը: Եթե կողմերից մեկը հայց է ներկայացնում դատարան, ապա մյուս կողմը կարող է տվյալ դատարանին միջնորդությամբ հանդես գալ, և եթե կողմերը ունեն արբիտրաժի դիմելու վավեր համաձայնություն, ապա դատարանը պետք է դադարեցնի դատական ընթացքը և գործը հանձնի արբիտրաժի (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 8):

4.4 Արդյո՞ք անհրաժեշտ է իրավաբանի աջակցությունը արբիտրաժի հարցով կամ արբիտրաժային վերապահում կազմելիս:

Եթե վեճը խճճված ու մեծ չէ, ապա ամենայն հավանականությամբ Ձեզ անհրաժեշտ չէ նման աջակցությունը: Եթե կողմերը հետեւել են հայտնի կանոնների օրիկանելի վերապահման ձեւին, ապա այդ վերապահումը հավանաբար բավարար կլինի արբիտրաժի համար: Վեճի ծագման պարագայում, ընտրված կանոնները ուղղություն կտան կողմերին արբիտրաժային վարույթը մեկնարկելու համար: Եթե արբիտրաժը կազմակերպվում է հաստատության կողմից, ապա տվյալ հաստատությունը կտրամադրի հավելյալ աջակցություն այս հարցում: Եթե արբիտրաժային վարույթը, լինի այն հաստատության կողմից կազմակերպվող կամ ad hoc, իրականացնի փորձառու արբիտր, ապա վերջինս կտրամադրի անհրաժեշտ աջակցություն գործընթացը իրականացնելու հարցում:

Այնուամենայնիվ, կողմերը կարող է դիմեն իրավաբանի ծառայություններին երբ արբիտրաժը վերաբերում է կարևոր հարցի: Իրավաբանը կարող է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել արբիտրաժային վերապահումը կազմելիս, որպեսզի այն ծառայի իր վստահորդի շահերին, իսկ արբիտրաժի իրականացման պարագայում, կարող է նախաձեռնություն վերցնել ապացույցներ հավաքագրելիս, վկաներ ներկայացնելիս, օրենսդրության շուրջ

մեկնաբանությունների կատարելիս և զեկուցագրեր ներկայացնելիս՝ գործողություններ, որոնք մեծ արբիտրաժներում տարածված են:

Հաճախ նշվում է, որ վերջին տարիներին աճել է իրավաբանական խորհրդատվության կարևորությունը մեծ արբիտրաժներում, որոնք միտում են շատ առումներով նմանվելում դատական մեծ գործերին: Հնուտ իրավաբանն ու խելացի վստահորդը արբիտրաժային ընթացակարգը և արբիտրաժային վերապահումը կազմում են ուշադրությամբ և մանրամասնորեն՝ հետագա բարդությունները նվազագույնի պահելու և ժամանակ ու գումար խնայելու նպատակով:

#### 4.5 Որո՞նք են լավագույն արբիտրաժային կանոնները:

Բոլոր գլխավոր արբիտրաժային հաստատությունները ունեն արբիտրաժի կանոններ: Նման հաստատությունների շարքին են պատկանում Առևտրի միջազգային պալատը (ICC), Միջազգային արբիտրաժի Լոնդոնյան դատարանը (LCIA) և Ամերիկայի արբիտրաժային ընկերակցության վեճերի հարթման միջազգային կենտրոնը (AAA): Լայն կիրառում գտած կանոններից են նաև ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) կանոնները:

Վերը նշված կանոնները փորձված են և կիրառելի: AAA-ի, ICC-ի, LCIA-ի և շատ այլ արբիտրաժային հաստատությունները կողմից մշակված կանոնները խորհուրդ են տալիս, որպեսզի արբիտրաժը կազմակերպվի այն հաստատության կողմից, որի կանոնները կողմերը ընտրել են: Եթե արբիտրաժը կազմակերպվում է հաստատության կողմից, ապա վերջինիս ցուցաբերած աջակցություն կարող է բավականին օրինակելի լինել: Ամեն դեպքում, պետք է հաշվի առնել, որ նման հաստատությունները, որոնք մասնավոր, շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, ծառայությունների դիմաց գումար են գանձում: UNCITRAL-ի կանոններով իրականացվող արբիտրաժը “ad hoc” է, այսինքն այն կազմակերպվում է ոչ թե հաստատության կողմից, այլ հենց արբիտրների, և փաստորեն որևէ արբիտրաժային հաստատության վճարում չի կատարվում:

Այս հատվածում նշված արբիտրաժային կանոնները, ինչպես նաև նշված հաստատությունների ծառայությունների ներկա գնացուցակը տեղադրված են Հավելվածներ Ա-3-Ա-6-ում և Ա-4.2-ում (LCIA-ի գնացուցակ):

Կարևոր է, որպեսզի կողմերը արբիտրաժային համաձայնությունը կազմելիս մեծ ուշադրություն դարձնեն կիրառվող արբիտրաժային կանոնների ընտրությանը: Կողմերը հիմնականում ազատ են իրենց արբիտրաժային

համաձայնության կանոնները փոփոխելու ըստ նպատակահարմարության: Այնուամենայնիվ հատկանշական է, որ ICC-ի կանոնները ներառում են որոշակի հիմնարար ընթացակարգեր, որոնք կողմերը հնարավորություն չունեն փոփոխելու (եթե ընտրեն ICC-ի կանոնները): ICC-ի կանոնները ICC-ին արբիտրաժի ընթացքը վերահսկելու և դրան աջակցելու առումով ավելի լայն իրավասություններ են տալիս, քան այլ գլխավոր արբիտրաժային հաստատությունների կանոնները: Ընդ որում, ICC-ի պարագայում այդ իրավասությունները անբեկանելի են:

#### 4.6 Արդյո՞ք արբիտրաժը պետք է վարվի արբիտրաժային ինստիտուտի կողմից:

Ոչ: Հնարավոր է, որ կողմերը համաձայնության գան անցկացնել “ad hoc” (հատուկ այդ պարագայի համար ստեղծված) կամ արբիտրաժային հաստատության միջոցով չվարվող արբիտրաժ: Արբիտրաժային հաստատությունները (ինչպիսիք են AAA-ը, ICC-ն, LCIA-ը կամ Հայաստանում հիմնադրված որևէ հաստատություն) կարող են աջակցել վարույթի կազմակերպմանը: Սակայն, մեծ և փոքր արբիտրաժներ կազմակերպելիս հաճախ կողմերը որոշում են թողնել արբիտրաժի վարումը հենց արբիտրներին, ընդհանրապես գոհացուցիչ արդյունքներով: Հաստատության կողմից չվարվող արբիտրաժի արբիտրաժային վերապահման օրինակ կարելի է գտնել UNCITRAL-ի Արբիտրաժային կանոններում, էջ 4, Հավելված Ա-6: Վերապահումը պահանջում է, որպեսզի արբիտրաժն անցկացվի ըստ UNCITRAL-ի կանոնների, որոնք բավականին մանրամասն են, ամբողջական և փորձված “ad hoc” արբիտրաժի համար: Տես Հավելված Դ “ad hoc” արբիտրաժային արբիտրների նշականման եւ վարույթի այլ կազմակերպչական տեղեկությունների համար:

Եթե կողմերը ընդունում են UNCITRAL-ի կանոնների Մոդելային վերապահումը, ապա կարևոր է նշանակել նշանակող հեղինակությունը՝ Մոդելային վերապահման համապատասխան հողվածում: Եթե արբիտրների նշանակման կարգը, որի շուրջ համաձայնվել են կողմերը, ձախողվում է, կամ եթե կողմերից մեկը բացարկ է հայտնում «օր© արբիտրի անաչառության պատճառով, ապա UNCITRAL-ի կանոնները նախատեսում են, որ նշանակումը կատարվի կամ բացարկի հայտը որոշվի նշանակող հեղինակության կողմից, ըստ կողմերի համաձայնությամբ: Նախքան նշանակող հեղինակության նշանակումը, պետք է վստահ լինել, որ նշանակվող անձը կամ հաստատությունը ցանկանում է ստանձնել նշանակող հեղինակության դերը: ՀՀ Արևտրի պալատի արբիտրաժային դատարանը, Իրավունքների պաշտպան միությունը և ՀՀ Փաստաբանների պալատի նախագահը հայտնել են իրենց ցանկությունը անհրաժեշտության դեպքում ստանձնել նշանակող

հեղինակության դերը, հաստատության կողմից չվարվող արբիտրաժի կազմակերպմանը աջակցելու նպատակով:

4.7 Կարո՞ղ է արբիտրաժային վերապահումը կիրառելի չլինել: Եթե այո, ապա ինչպիսի՞ հիմքերով:

Հայցը, որը պնդում է, որ արբիտրաժային վերապահումը անկիրառելի է, ըստ երևույթի պնդում է նաև, որ արբիտրաժային տրիբունալը համապատասխան իրավասություն չունի տվյալ գործի նկատմամբ: Թե՛ դատարանը, թե՛ արբիտրաժային տրիբունալը կարող են որոշում կայացնել, որ արբիտրաժային տրիբունալը չունի համապատասխան իրավասություն, քանի որ այն արբիտրաժային համաձայնությունը, որով առաջնորդվել է հայցվորը, կիրառման ենթակա չէ:

Արբիտրաժային վերապահումը կարող է համարվել կիրառման չենթակա, եթե համաձայնությունը չի ներառում վեճի կողմերին կամ վեճի խնդիրը, կամ եթե տվյալ համաձայնությունը չի կազմվել ըստ արբիտրաժային օրենքի պահանջների (օրինակ, եթե համաձայնություն չի կայացվել երկու կողմերի միջև գրավոր տեսքով), կամ եթե ըստ պայմանագրային օրենքի ընդհանուր սկզբունքների արբիտրաժային համաձայնությունը վավեր պայմանագիր չի հանդիսացել (օրինակ, որովհետև կողմերից մեկը իրավունակ չի եղել կնքելու պայմանագիրը, կամ որովհետև արբիտրաժային համաձայնությունը հանդիսացել է կեղծիքի կամ ճնշման արդյունք):

Եթե որևէ կողմ ցանկանում է պնդել, որ արբիտրաժային տրիբունալը չունի համապատասխան իրավասություն, քանի որ արբիտրաժային վերապահումը կիրառման ենթակա չէ, կամ որևէ այլ պատճառով, ապա այդ քայլին նա պետք է դիմի առանց հապաղման: Արբիտրաժի Օրենքը, Հոդ. 4, և շատ այլ արբիտրաժային կանոններ նախատեսում են, որ եթե որևէ կողմ տեղյակ է, որ արբիտրաժային վերապահումը կիրառման ենթակա չէ, բայց այնուամենայնիվ շարունակում է մասնակցել արբիտրաժային ընթացակարգին առանց առարկելու արբիտրաժային տրիբունալի իրավասությանը կամ արբիտրաժային վերապահման վավերականությանը, ապա այդ քայլով նա փաստորեն հրաժարվում է իր առարկությունից և համաձայնվում է ըստ տվյալ արբիտրաժային վերապահման իրականացնել արբիտրաժը:

Եթե կողմը պատշաճ ժամանակին առարկում է արբիտրաժային հաստատության իրավասությանը, ապա արբիտրները կարող են գրանցել առարկությունը և հետաձգել որոշման կայացումը մինչև գործի որոշումը ըստ էության, կամ նրանք կարող են իրավասության վերաբերյալ որոշում կայացնել որպես նախնական հարց: Եթե նրանք կայացնեն նախնական որոշում, որ

ունեն համապատասխան իրավասություն, ապա առարկող կողմը կարող է 30-օրյա ժամկետում այս հարցով միջնորդել ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Դատարանի կողմից հարցը քննելու ընթացքում արբիտրները կարող են սեփական հայաեցողությամբ շարունակել կամ կանգնեցնել արբիտրաժի ընթացքը, Արբիտրաժի Օրենք, Հոդ. 16(3):

4.8 Արբիտրաժի կողմերը կարո՞ղ են դիմել դատարանը որ ուղղի վերապահման էական բացթողումները (օրինակ՝ արբիտրաժի լեզվի ընտրությունը, կիրառվող օրենսդրությունը, արբիտրաժի կանոնների ընտրությունը, վայրը, վաղեմության կամ այլ ժամակետների խախտումները): Իրավասո՞ւ է արբիտրաժային տրիբունալը ուղղել այս բացթողումները:

Ո՛չ դատարանը, ո՛չ արբիտրաժային տրիբունալը չեն կարող խմբագրել կողմերի արբիտրաժային համաձայնությունը: Դատարանի և արբիտրների պարտականությունն է կատարել համաձայնությունը, նույնիսկ եթե կողմերն իրենց համաձայնությունը խելամիտ չեն կազմել:

Այնուամենայնիվ, այս պարտականությունը կատարելիս արբիտրներն ու դատարանները առաջնորդվում են արբիտրաժային վերապահման կիրառելիության վարկածով: Այն չափով, որ թույլատրվում է կողմերի ընտրած պայմանների սահմաններում, արբիտրներն ու դատարանը մեկնաբանում են արբիտրաժային համաձայնությունը այնպես, որպեսզի այն լինի վավեր, իսկ վարվող արբիտրաժը՝ արդյունավետ:

Դեռ ավելին՝ եթե կողմերը վավեր համաձայնության են եկել վեճի հարցով դիմելու արբիտրաժի, ապա արբիտրաժային համաձայնության մեջ լեզվի, արբիտրաժի վայրի կամ արբիտրների քանակի վերաբերյալ դրույթների բացակայությունը անուղղելի սխալ չէ: Եթե կողմերը համաձայնության են եկել արբիտրաժային կանոնների որևէ խմբի վերաբերյալ, ապա այդ կանոնները արբիտրներին թույլ կտան ուղղելու այս բացթողումները: Դրա հետ մեկտեղ, արբիտրները իրավասու են որոշելու, թե որ օրենսդրությամբ սահմանված վաղեմության կամ այլ ժամկետներն են կիրառելի տվյալ դեպքում:

Եթե կողմերի արբիտրաժային վերապահման մեջ նշված չէ արբիտրաժային կանոնների որևէ խումբ, սա կարող է առաջ բերել տարբեր, ավելի լուրջ խնդիրներ: Չունենալով հստակ արբիտրաժային կանոններ կամ հաստատություն, որին կարելի է դիմել՝ հայցվորը պետք է դիմի դատարան, որպեսզի վերջինս պահանջի արբիտրաժային վարույթ կամ նշանակի արբիտր(ներ): Միայն ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին

ատյանի դատարանն ունի նման իրավասություն ըստ Արբիտրաժի Օրենքի (Հոդվածներ 11(3)(1), 11(4)): Նշանակվելուց հետո, արբիտրը կարող է որոշել (հիմնականում կողմերին լսելուց հետո), թե ինչպես պետք է ուղղվեն կողմերի արբիտրաժային համաձայնության բացթողումները:

#### 4.9 Ինչո՞ւ է կարևոր, որ կողմերը համաձայնության գան արբիտրաժի վայրի վերաբերյալ:

Այն հարցը, թե արդյոք կողմերը կազմել են վավեր արբիտրաժային վերապահում, որոշվում է այն երկրի արբիտրաժային օրենքներով, որտեղ իրականացվում է արբիտրաժը: Այդ օրենքներով են ղեկավարվում նաև արբիտրաժի հիմնական ընթացակարգային պահանջները: Տեղական արբիտրաժային օրենքով է որոշվում տեղական դատարանների դերը արբիտրաժային գործընթացը վերահսկելու և աջակցելու գործում, ինչպես այդ դատարանների իրավասություններն ու պարտականությունները արբիտրալ որոշումը վերանայելու, չեղյալ ճանաչելու կամ կիրառելու հարցում:

Նախընտրելի է, որ կողմերը օգտվեն արբիտրաժի վայր ընտրելու իրենց իրավունքից: Սա հատկապես կարևոր է միջազգային գործարքների պարագայում: Կողմերից մեկի պետության տարածքում գտնվող դատարանների նախադեպերը ու ընթացակարգերը, ինչպես նաև այդ դատարաններում գործածվող լեզուն, կարող է խորթ լինել մյուս կողմի համար:

Եթե կողմերը համաձայնության չգան արբիտրաժի վայրի հարցում, ապա այդ վայրը ընտրվում է արբիտրների (կամ որոշ դեպքերում արբիտրաժային հաստատությունների) կողմից:

#### 4.10 Ո՞ր օրենքը կամ օրենքներն են գործածվում արբիտրաժի ընթացքում:

Երկու տեսակի օրենք է կիրառվում:

Առաջինը կիրառվող նյութական օրենքն է, որը որոշում է պայմանագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Այդ օրենքը ընտրվում է կողմերը համաձայնությամբ արբիտրաժային համաձայնությունը կազմելիս, կամ, եթե կողմերը համաձայնության չեն գալիս, ընտրվում է արբիտրների կողմից՝ տվյալ պայմաններում ըստ նպատակահարմարության:

Երկրորդը կիրառվող ընթացակարգային օրենքն է (կամ, ավելի ճիշտ, lex arbitri): Սա գրեթե միշտ այն երկրի օրենքն է, որտեղ կայանում է արբիտրաժը՝ ինչպես նշված է տեղական արբիտրաժային օրենքում և պարզաբանված տեղական դատարանների կողմից: Այս մարմինները որոշում են ոչ միայն

նվազագույն ընթացակարգային չափանիշները, որոնք կիրառվում են այդ երկրում իրականացվող արբիտրաժներում, այլև այնպիսի հարցեր, ինչպիսիք են արբիտրաժային համաձայնության կամ արբիտրալ որոշման կիրառելիությունը և տեղական դատարանների դերը արբիտրաժի հարցում: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արբիտրաժի պարագայում, բոլոր նման հարցերը կարգավորվում են Առևտրային արբիտրաժի մասին նոր ՀՀ օրենքով:

Պետք է նշել, որ որոշ հարկադիր օրենքներ, ինչպիսիք են մրցակցությունը, մտավոր սեփականությունը կամ արժեթղթերի գործարքները կարգավորող օրենքները, կարող են կիրառվել որոշ արբիտրաժներում կիրառվող նյութական և ընթացակարգային օրենքների հետ մեկտեղ: Կողմերը չեն կարող իրենց համաձայնությամբ շրջանցել կիրառվող օրենքը:

Հատուկ դեպք են կազմում այն արբիտրաժները, որոնք կարգավորվում են միջազգային պայմանագրերով և ոչ թե տեղական օրենսդրությամբ: Մի պետության ներդրողի և մեկ այլ պետության կառավարության միջև արբիտրաժները, որոնք կարգավորվում են Պետությունների և այլ պետության քաղաքացիների միջև ներդրումային վեճերի հարթման կոնվենցիայով (ICSID Կոնվենսիան), հանդիսանում են այս կարգի արբիտրաժների կարևոր կատեգորիա: Ըստ ICSID կոնվենցիայի՝ ներդրողն ու ստացող պետությունը կարող են համաձայնվել, որ ներդրումային վեճերը կհարթվեն Կոնվենցիային համապատասխան կազմված հատուկ արբիտրաժային տրիբունալի կողմից: Նման արբիտրաժների պարագայում արբիտրաժը կարգավորող օրենքը (lex arbitri) տեղական արբիտրաժային օրենքը չէ, այլ ICSID Կոնվենցիան: Ըստ Կոնվենցիայի՝ տեղական դատարանների իրավասությունը սահմանափակվում է ICSID արբիտրաժային որոշումների կատարման վերաբերյալ որոշումներով:

#### 4.11 Ինչպե՞ս կարելի է փորձառու արբիտր գտնել:

Արբիտրաժի ամենաէական առավելություններից մեկն այն է, որ արբիտրաժի կողմերը իրավասու են մասնակցել արբիտրի ընտրության գործընթացին: Եթե արբիտրաժի մեկ արբիտր է իրականացնելու, ապա վերջինս ընտրվում է կողմերի համաձայնությամբ: Եթե պետք է ընտրվեն երեք արբիտր, ապա գլխավոր արբիտրաժային կանոնները թուլատրում են յուրաքանչյուր կողմին ինքնուրույն նշանակել կամ առաջադրել երեք արբիտրներից մեկին:

Բոլոր գլխավոր արբիտրաժային կանոնների, ինչպես նաև Արբիտրաժի Օրենքի ու այլ ժամանակից արբիտրաժային օրենքների համաձայն, բոլոր արբիտրները պետք է լինեն չեզոք (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 12): Սա վերաբերում է նաև այն

արբիտրներին, որոնք ընտրվել կամ առաջադրվել են միայն մեկ կողմի կողմից: Արբիտրը պետք է լինի անկողմնակալ, այսինքն՝ չպետք է նախօրոք որևէ դիրքորոշում ունենա տվյալ արբիտրաժի վերջնական որոշման վերաբերյալ: Արբիտրը պետք է նաև անկախ կլինի, այսինքն՝ չպետք է որևէ էական ֆինանսական, ընտանեկան կամ այլ շահ ունենա, որը նրան կախման մեջ կդնի որևէ կողմից կամ կողմի իրավաբանից: Այս հիմնական սկզբունքները, որոնք միջազգայինորեն ընդունված են, ամրագրված են Միջազգային իրավաբանական ընկերակցության միջազգային արբիտրների էթիկայի կանոններում, Հավելված Ա-7:

Արբիտրները գրեթե միշտ նշանակվում են որևէ վեճ լուծելու համար այն բանից հետո, երբ վեճը ծագել է և արբիտրաժի հայց ու հայցի պատասխան է ներկայացվել: Այն ժամանակ, երբ կողմին հնարավորություն է տրվում չեզոք արբիտր նշանակելու, կողմը պետք է հետամուտ լինի այնպիսի արբիտր ընտրել, որը ոչ միայն հմուտ է և բանիմաց արբիտրաժի վարման և առկա վեճի խնդրի հարցերում, այլև որի կենսագրությունը և ուսուցումը հավանական են դարձնում, որ տվյալ անձը կհասկանա իրեն նշանակած կողմի փաստարկները և ընդհանուր առմամբ բաց լինել այդ կողմի տեսակետների հանդեպ:

Արբիտրաժային հաստատությունների մեծ մասը կազմում են որակավորված արբիտրների ցուցակներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում առաջարկում են արբիտրներ՝ ներկայացնելով իրենց կենսագրականները: Ներկայումս, Հայաստանում առկա է երկու հիմնական կազմակերպություն, որն պահում է արբիտրների ցուցակ: Օր© դրանցից մեկի՝ Իրավունքների պաշտպան միության՝ ցուցակում ընդգրկված են 35 արբիտր, իսկ ՀՀ Առևտրի և արդյունաբերության պալատի ցուցակում՝ 12 արբիտր:

#### 4.12 Ի՞նչ էրե կողմերը չեն կարողանում համաձայնության գալ արբիտրի նշանակման հարցում:

Կողմերի ընտրած արբիտրաժային կանոնները նախատեսում է նշանակման ընթացակարգ: Եթե կողմերը որոշել են, որ արբիտրաժն կազմակերպվի հաստատության կողմից, օրինակ՝ ըստ ICC, AAA կամ LCIA կանոնների, ապա այն հաստատությունը, որի կանոնները կողմերը ընտրել են, կկատարի արբիտրների նշանակումը, սովորաբար կողմերի հետ խորհրդակցելուց հետո: Եթե կողմերը չեն համաձայնվել կիրառվող արբիտրաժային կանոնների շուրջ, նրանք կարող են դիմել դատարան, որպեսզի վերջինս կատարի նշանակումը:

\* In 1987, the IBA published Rules of Ethics for International Arbitrators. Those Rules cover more topics than these Guidelines, and they remain in effect as to subjects that are not discussed in the Guidelines. The Guidelines supersede the Rules of Ethics as to the matters treated here. *IBA Guidelines on Conflicts of Interest in International Arbitration*, (May 2004), 5

Ըստ Արբիտրաժի Օրենքի՝ կողմերը դիմում են ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարան (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 11(3)(1), 11(4)):

4.13 Ի՞նչ եթե կողմերից մեկը գտնում է, որ արբիտրը անկողմնակալ չէ:

Ինչպես վերը նշվեց, Արբիտրաժի Օրենքի 12-րդ հոդվածը, ինչպես նաև այլ գլխավոր արբիտրաժային օրենքներն ու կանոնները, պահանջում են, որպեսզի արբիտրները լինեն անկողմնակալ ու անկախ: Այս օրենքների ու կանոնների համաձայն, եթե կողմերից մեկը պատճառ ունի հավատալու, որ արբիտրը չունի անհրաժեշտ անկողմնակալությունն ու անկախությունը, ապա պետք է պատշաճ ժամանակում առարկի այդ արբիտրի իրավասությունը, հակառակ դեպքում կորցնում է իր այդ իրավունքը: Արբիտրաժի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, բացարկյան հայտը պետք է ներկայացվի բացարկյան հիմքի առկայության մասին առարկող կողմի տեղեկանալուց հետո 15 օրվա ընթացքում:

Եթե առարկությունը արբիտրաժային ընթացակարգում վաղ է կատարվում է, ապա բացարկյան հայտը նախ քննում է այն արբիտրը, որի վերաբերյալ բացարկյան հայտ է ներկայացվել: Եթե նա հրաժարվում է հրաժարական տալ, և եթե կողմերը համաձայնվել են արբիտրաժը կարգավորող կանոնների շուրջ, ապա բացարկյան հայտը կարող է ներկայացվել նշանակող մարմնին՝ ընտրված արբիտրաժային կանոնների համաձայն: Եթե նշանակող մարմինը հրաժարվում է որակագրկել արբիտրին, կամ եթե կողմերը չեն համաձայնվել նշանակող մարմինը նախատեսող կանոնների շուրջ, բողոքարկող կողմը կարող է դիմել դատարան (Հայաստանում՝ ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարան), որպեսզի վերջինս որակագրկի արբիտրին (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 13(3)):

Եթե բացարկյան հիմքերը բացահայտվում են միայն արբիտրալ որոշման ընդունումից, ապա պարտվող կողմը, եթե գործի պատշաճ ժամկետում, կարող է դիմել դատարան՝ որոշումը չեղյալ ճանաչելու կամ նրա ճանաչումից ու կիրառումից հրաժարվելու հարցով (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 34 և 36):

Եթե արբիտրը որակագրկվում է, նրան փոխարինողը սովորաբար նույն կարգով է նշանակվում ինչ որակագրկված արբիտրն էր նշանակվել (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 15(1)):

4.14 Ի՞նչ եթե արբիտրը թերանում է կամ չափազանց դանդաղ է գործում:

Այս հարցը հստակ պատասխան չունի: Գործնականում, բողոքարկող կողմի հիմնական հույսը կարող է լինել արբիտրաժը կազմակերպող հաստատությանը ոչ ֆորմալ բողոք ներկայացնել: Այս հաստատությունները հետամուտ են լինում, որպեսզի իրենց կազմակերպած արբիտրաժները արդյունավետ ընթացք ունենան: Արբիտրաժային տրիբունալին կողմի ներկայացրած քաղաքավարի հուշումը նույնպես կարող է գործընթացը արագացնել:

Արբիտրաժի Օրենքը նախատեսում է, որ կողմը կարող է դիմել ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որպեսզի վերջինս հեռացնի թերացող կամ ժամանակ ձգձգող արբիտրին (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 14(1)): Այնուամենայնիվ, այս գործընթացը նույնպես հնարավոր է լինի ժամանակատար, և դատարանը կարող է պահանջել հիմնավոր ապացույցներ մինչ այդ քայլին դիմելը:

Թերացող կամ ժամանակ ձգձգող արբիտրի վտանգից խուսափելու լավագույն ձևը արբիտրի նշանակման գործընթացում առավել ուշադիր լինելն է:

4.15 Ի՞նչ էթե առկա են մի քանի, միմյանց առնչվող վեճեր, որոնք ներառում են ավելի քան երկու կողմ: Հնարավո՞ր է նրանց համատեղ լսում նշանակել:

Քանի որ արբիտրաժը կողմերի համաձայնության արդյունք է, համատեղումը հնարավոր է միայն, եթե գործին առնչվող բոլոր կողմերը (բոլոր այն պայմանագրերի կողմերը, որի հիմքի վրա են ծագել վեճերը) համաձայն են այդ քայլին: Թեպետ ՀՀ դատարանները դեռ պետք է անդրադառնան այս խնդրին, այլ պետությունների դատարանների ճնշող մեծամասնությունը այս մոտեցումն է որդեգրել:

Եթե կողմերը կարող են կանխատեսել, որ անհրաժեշտ կլինի միացնել ավելի քան մեկ պայմանագրի հիմքի վրա ծագող, միմյանց հետ կապ ունեցող արբիտրաժները, ապա նրանք պետք է արբիտրաժային վերապահումներ կազմեն այս պայմանագրերից յուրաքանչյուրի համար, որպեսզի նման միացումը հնարավոր լինի: Համատեղում նախատեսող վերապահումների ձեւակերպման վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող էք գտնել 'Drafting an Arbitration Clause' հատվածում, էջ 11, Հավելված Բ-3\*:

4.16 Հնարավո՞ր է նախքան արբիտրաժային որոշումը ձեռք բերել ապահովման միջոցներ:

---

\* © Markham Ball, 2007

Համապատասխան դեպքերում՝ այո:

Արբիտրաժային կանոնների մեծ մասը լիազորում է արբիտրներին հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնել: Պայմանաններին համապատասխան, նման միջոցներ կարող են լինել ժամանակավորապես սահմանափակող պահանջները և ունեցվածքի առգրավումը կամ սառեցումը: Ըստ նշված կանոնների, նման պահանջները կարող են տրվել միայն արբիտրաժի կողմերին, և ոչ երրորդ կողմերին: Պատճառն այն է, որ երրորդ կողմերը ենթակա չեն մի արբիտրաժային համաձայնության, որին իրենց համաձայնությունը չեն տվել, և ապա ենթակա չեն նաև այն արբիտրներին, որոնք իրականացնում են այդ համաձայնությանն առնվող արբիտրաժը: Եթե կողմը հրաժարվում է հետևել տրինուբալի՝ հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումը, հայցվոր կողմը կարող է դիմել դատարան (ՀՀ պարագայում՝ ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան), որպեսզի վերջինս որոշում ընդունի պահանջված միջոցների վերաբերյալ (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 17(3)):

Սրա հետ մեկտեղ, ապահովման միջոցներ պահանջող կողմը ցանկացած ժամանակ, նույնիսկ արբիտրաժի մեկնարկից կամ արբիտրաժային տրիբունալի կազմումից առաջ, կարող է դիմել ՀՀ դատարան (Քաղաքացիական դատավարության օրենսգրք, Հոդ. 97): Դատարանի որոշումը կարող է առնչվել ինչպես արբիտրաժի կողմերին, այնպես էլ երրորդ կողմերին (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 17(3)): Դատարանը իրավասու է քաղաքացիական տույժի ենթարկել այն անձանց, որոնք հրաժարվում են ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ դատարանի որոշմանը հետևելուց (Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ Օրենք, Հոդ. 72(1)):

#### 4.17 Ինչպե՞ս կարող է կողմը ապացույցներ ձեռք բերել մյուս կողմից կամ երրորդ կողմերից:

Հաճախ արբիտրաժի կողմերը համաձայնվում են փոխանակել համապատասխան փաստաթղթերը: Երբեմն երրորդ կողմերը նույնպես համաձայնվում են փաստաթղթեր տրամադրել: Այնուամենայնիվ, սովորաբար նման կամավոր պայմանավորվածությունները պետք է լրացվեն արբիտրաժային տրիբունալ կամ դատարան ներկայացված միջնորդություններով: Սովորական արբիտրաժում, կողմերը վաղ շրջանում արբիտրի հետ համաձայնության են գալիս փաստաթղթերը փոխանակելու հարցում, որից հետո արբիտրն իր որոշմամբ հաստատում է այս համաձայնությունը և դարձնում այն պարտադիր:

Եթե կողմը հրաժարվում է հետևել արբիտրի՝ ապացույցների ներկայացման որոշմանը, ապա արբիտրը այս հրաժարումից կարող է բացասական հետևություն կատարել: Նա կարող է ենթադրել, որ կողմի ենթակայության ներքո գտնվող փաստաթղթերը, որը կողմերը հրաժարվում է ներկայացնելուց պարունակում է այդ կողմի դիրքերի համար վնասակար տեղեկատվություն: Դրա հետ մեկտեղ, եթե կողմին անհրաժեշտ փաստաթղթերը գտնվում են հակառակ կողմի կամ երրորդ կողմի ենթակայության ներքո, ապա տվյալ կողմը կարող է դիմել դատարան, Հայաստանի պարագայում՝ ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որպեսզի վերջինս պահանջի այդ փաստաթղթերի ներկայացումը: Դատարանը իրավասու է պահանջել ապացույցների ներկայացման մասին որոշումների հարկադիր կատարումը երրորդ կողմերի նկատմամբ, ինչպես նաև արբիտրաժի կողմերի նկատմամբ (Արբիտրաժի Օրենք, Հոդ. 27): Սովորաբար, կողմը դիմում է դատարանի աջակցությանն այս հարցում եթե պահանջված փաստաթղթերի տերը հրաժարվել է հետևել արբիտրի համապատասխան որոշմանը:

Չափազանց լայն, չմանրամասնված ապացույցների ներկայացման պահանջները մերժվում են: Արբիտրաժի ընթացքում, կողմերը չպետք է ապացույցների ներկայացման պահանջը վերածեն նրա՛ն: Ըստ համընդհանուր ըդնունված չափանիշների՝ պահանջած փաստաթղթերը պետք է նշված լինել խելամիտ հստակությամբ, պետք է գործին առնչվեն և ընդունելի լինեն որպես ապացույց: Այս հարցի շուրջ միջազգային փորձի համար տեսե՛ք Հավելված Ա-8, Միջազգային իրավաբանների ընկերակցության ապացույցների կանոնները:

Ապացույցների ներկայացման որոշում կայացնելը գտնվում է արբիտրների լայն հայեցողության ներքո: Այնուամենայնիվ, օրենքը նրանց պարտավորում է յուրաքանչյուր կողմին տալ պատաշաճ հնարավորություն իր փաստարկները ներկայացնելու համար: Եթե արբիտրը հրաժարվում է պահանջել այն փաստաթղթերի ներկայացումը, որոնք բացահայտորեն առկա են, առնչվում են գործին և կարող են էականորեն հիմնավորել որևէ կողմի փաստարկները, ապա սա կարող է լինել բավարար հիմք արբիտրի որոշումը չեղյալ ճանաչելու կամ դրա ճանաչումն ու կիրառումը մերժելու համար, (Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 34(2)(1)(b), 36(1)(1)(b)):

Փաստաթղթերի ներկայացման որոշումները կարելի է ձեռք բերել նաև ՀՀ դատարանների միջոցով՝ ըստ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի: Դատարանները Հայաստանում գտնվող կամ Հայաստանի դատարանների իրավասության ներքո գտնվող անձանցից ապացույցների ներկայացումը պահանջելիս հետևում են նույն ընթացակարգերին, ինչ դատավարության ընթացքում ապացույցների ներկայացում պահանջելիս, (Քաղաքացիական դատավարության օրենսգրք, Հոդ. 65):

Եթե անհրաժեշտ փաստաթուղթը գտնվում է մի կողմի ենթակայության ներքո, որը գտնվում է Հայաստանի դատարանների իրավասությունից դուրս, ապա այդ փաստաթուղթը կարող է պահանջվել միայն Հազգայի Ապացույցների մասին Կոնվենցիային (Հավելված Ա-9) համապատասխան գործող միջազգային ընթացակարգերով, կամ այն երկրի օրենսդրությանը համաձայն, որտեղ գտնվում է տվյալ կողմը: Օրինակ, ԱՄՆ դատարանների մեծ մասը (բայց ոչ բոլորը) գտնում է, որ Հայաստանում վարվող արբիտրաժի կողմը կարող է դիմել ԱՄՆ դատարան, որպեսզի վերջինս որոշում կայացնի, որ ԱՄՆ բնակիչը տրամադրի Հայաստանում կայացվող արբիտրաժի համար պահանջվող նյութերը: ԱՄՆ դատարաններին նման իրավասություն է նախատեսված ԱՄՆ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, 28 U.S.C. Sec.1781 et seq.

#### 4.18 Ինչպե՞ս է պարտադրվում վկաների ներկայությունը:

Հայաստանում արբիտրաժային լուծմանը վկաների ներկայությունը նման գործընթացով է ապահովվում: Կողմի առաջին քայլը պետք է լինի փորձել ապահովել վկայի կամավոր ներկայությունը: Հաջորդ քայլն այն է, որ արբիտրները, արբիտրաժային կանոններով համապատասխան իրավասություն ստանալով, պահանջեն իրենց իրավասության ներքո գտնվող անձանց և կողմերի ներկայությունը: Վերջապես, կողմը կարող է դիմել դատարան, որպեսզի վերջինս պահանջի դատարանի իրավասության տակ գտնվող անձանց ներկայությունը: Ըստ Արբիտրաժի Օրենքի 27-րդ հոդվածի՝ ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը իրավասու է նման որոշումներ կայացնել: Վկայի ներկայությունը պահանջող որոշումներ կարող են կայացվել նաև ՀՀ դատարանների կողմից, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

Բավականին դժվար է (շատ դեպքերում նույնիսկ անհնար) պահանջել մի վկայի ներկայությունը, որը չի գտնվում այն պետության դատարանների իրավասության ներքո, որտեղ իրականացվում է արբիտրաժը:

#### 4.19 Ի՞նչ է եթե Հայաստանում գտնվող արբիտրները արբիտրաժային որոշում են կայացնում, որին պարտվող կողմը հրաժարվում է հետևել:

Հաղթող կողմը կարող է դիմել որևէ դատարան, որն իրավասություն ունի մյուս կողմի նկատմամբ, որպեսզի այն որոշում կայացնի որոշման հարկադիր կատարման վերաբերյալ (սա վերաբերում է նաև այն արբիտրաժային որոշումներին, որոնք կայացվել են Հայաստանից դուրս), Արբիտրաժի Օրենք,

Հոդ. 35: Դատարանը պետք է ընդառաջի հայցը բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է որոշումը չեղյալ ճանաչելու համար Արբիտրաժի Օրենքի 34-րդ հոդվածում նշված սահմանափակ հիմքերից մեկը: Եթե արբիտրաժային որոշումը Հայաստանում է կայացվել և պարտվող կողմը հայցով դիմում է դատարան՝ արբիտրաժային որոշմամբ լուծված խնդիրը վերայելու ըստ էության, ապա դատարանը պետք է մերժի հայցը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդ. 91(1)(4):

#### 4.20 Ի՞նչ էթե արբիտրաժային որոշումը կայացվել է Հայաստանից դուրս:

Եթե որոշումը կայացվել է Հայաստանից դուրս, ապա գործընթացը հիմնականում նույնն է: Հաղթող կողմը կարող է դիմել ցանկացած դատարան, որն իրավասություն ունի մյուս կողմի նկատմամբ, որպեսզի այն որոշում կայացնի արբիտրաժային որոշման հարկադիր կատարման վերաբերյալ: Դատարանը պետք է ընդառաջի հայցը բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է որոշման ճանաչումն ու կիրառումը մերժելու համար սահմանափակ հիմքերից մեկը, Արբիտրաժի Օրենք, Հոդվածներ 35, 36:

Եթե որոշումը կայացվել է Հայաստանից դուրս և պարտվող կողմը հայցով դիմում է ՀՀ դատարան արբիտրաժային որոշմամբ լուծված խնդիրը ըստ էության վերանայելու համար, ապա դատարանը պետք է ճանաչի որոշման վավեր ու պարտադիր լինելը, և մերժի հայցը (բացառությամբ եթե առկա է ճանաչումը մերժելու իրավական հիմքերից մեկը), Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդ. 91(1)(4): Արբիտրաժի Օրենքի նշված դրույթները հիմնված են Օտարերկրյա պետությունների արբիտրաժային որոշումների ճանաչման և կիրառման մասին 1958թ. Նյու Յորքի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա (Հավելված Ա-2):

#### 4.22 Ո՞ր հիմքերով կարող է ՀՀ դատարանը չեղյալ ճանաչել Հայաստանում կայացված արբիտրաժային որոշումը կամ մերժել օտարերկրյա պետության որոշման ճանաչումն ու կիրառումը:

Արբիտրաժային որոշումը կարող է չեղյալ ճանաչվել միայն Արբիտրաժի Օրենքի 6-րդ հոդվածում նշված դատարանի կողմից (ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարան) հետևյալ վեց հիմքերից առնվազն մեկի առկայության դեպքում, Արբիտրաժի Օրենք, Հոդ. 34.

- 1 Արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կիրառվող օրենքի համաձայն անվավեր է:

- 2 Տվյալ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր փաստարկները ներկայացնելու հնարավորությունից:
- 3 Արբիտրաժային վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ:
- 4 Արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը:
- 5 Համաձայն ՀՀ օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից:
- 6 Վճիռը հակասում է ՀՀ հանրային կարգին:

Նշված վեց կետերը Արբիտրաժի Օրենքի 34-րդ հոդվածի դրույթների ամփոփ ներկայացումն է: Վեց դրույթներին ամոռջությամբ ծանոթանալու համար տեսե՛ք Արբիտրաժի Օրենք, Հոդ. 34 (Հավելված Ա-1):

4.22 Ի՞նչ է նշանակում Արբիտրաժի Օրենքի 34-րդ և 36-րդ հոդվածներում նշված հանրային կարգը:

ՀՀ դատարանների պարտականությունն է այս արտահայտությունը մեկնաբանելը և հետագա գործերում դրան բովանդակություն հստակեցնել: Ակնհայտ է, որ Արբիտրաժի Օրենքի անցյալն ու ենթատեքստը ենթադրում են, որ այս արտահայտությանը պետք է տրվի նեղ մեկնաբանություն:

Արտահայտությունը բառացիորեն վերցված է UNCITRAL Մոդելային օրենքին և 1958 թ. Նյու Յորքի Կոնվենցիայից: Շատ երկրների դատարաններ այդ արտահայտությունը տառացի են մեկնաբանել: Ենթադրվում է, որ ՀՀ դատարանները, մեկնաբանելով՝ հանրային կարգ՝ հասկացությունը, նրան կհաղորդեն նույն տառացի իմաստը, ինչ այլ երկրների դատարաններ: Տրամաբանական է, որ այն տերմինը, որը վերցված է շատ երկրների համար պարտադիր Կոնվենցիայով, և որը ներառված է շատ երկրների արբիտրաժային օրենքներում, պետք է նույն նշանակությունն ունենա բոլոր երկրներում:

Արբիտրաժի Օրենքի կազման հիմնական նպատակներն էին, նախ, հայկական արբիտրաժը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, այսինքն՝ համապատասխանեցնել Հայաստանում իրականացվող արբիտրաժի օրենքն ու պրակտիկան զարգացած արբիտրաժային համակարգ ունեցող երկրների չափորոշիչներին, և երկրորդը, վեճերը դատարանից դուրս հարթելու արդյունավետ կարգի հիմքը ստեղծել: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ ՀՀ դատարաններն աջակցեն արբիտրաժային համակարգի կայացմանը, նեղ մեկնքանեն արբիտրաժային գործընթացին միջամտելու սեփական լիազորությունները, և հանրային կարգին՝ վերաբերող հատուկ դեպքերում, սահմանափակեն միջամտությունը միայն այն չափով, որն անհրաժեշտ է վերահաս կամ իրական վտանգներից պաշտպանվելու համար:

4.23 Դատարանի կողմից արբիտրաժային որոշման ճանաչումից հետո, ի՞նչ քայլերի կարող է դիմել շահած կողմը, եթե պարտվող կողմի չի կատարում հատուցման վճարը:

Դատարանի ճանաչման որոշումը նույն ուժն ունի՝ ինչ դատարանի որևէ այլ որոշում. այն չկատարելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման, ըստ Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի, հոդ. 18, 19, 30: Ըստ այս օրենքի՝ դատարանի որոշումը ստանալուց հետո, եթե կողմը, որին վերաբերում է տվյալ որոշումը, չի ենթարկվում որոշմանը, ապա մյուս կողմը դատարան դիմելու իրավունք ունի կատարողական թերթիկ ստանալու համար: Կատարողական թերթիկը ներկայացվում է Հարկադիր կատարման ծառայություն, որն էլ ձեռնարկում է անհրաժեշտ քայլերը դատարանի որոշումը կատարելու համար:

4.24 Ի՞սկ եթե առկա է վեճ Արբիտրաժի Օրենքի նշանակության վերաբերյալ:

Առաջիկա տարիներին ՀՀ դատարանների հիմնական խնդիրներից մեկը կլինի Արբիտրաժի Օրենքի մեկնաբանումը և կիրառումը այնպես, որպեսզի զարգացվեն Արբիտրաժի Օրենքի կազման նպատակները: Այս հարցում ՀՀ դատարաններին կարող է օգնել առկա նախադեպը: Գոյություն ունեն պաշտոնական մեկնաբանություններ, գիտական աշխատանքներ և այլ պետությունների դատարանների որոշումներ UNCITRAL Մոդելային օրենքի վերաբերյալ, որի վրա և հիմնված է Արբիտրաժի Օրենքը: Վերջիններս կարող են ուղենիշ հանդիսանալ մեկնաբանման հարցում: Արբիտրաժի Օրենքի նախագծողների և ընդունող խորհրդարանի նպատակներից է եղել Հայաստանում միջազգային փորձի կիրառումը: ՀՀ դատարանների կողմից յուրօրինակ մեկնաբանությունները կարող են վնասել այս նպատակին և վտանգել Հայաստանի դերը միջազգային արբիտրաժի թատերաբեմում:

## Միջնորդություն

Միջնորդության պարագայում (կամ՝ հաշտեցման՝ ինչպես Եվրոպայում է ընդունված նշել), անաչառ միջնորդը աջակցում է կողմերին համաձայնության հասնելու հարցում: Միջնորդությունը էապես տարբերվում է արբիտրաժից: Արբիտրաժում չեզոք արբիտրը վերջնական և պարտադիր որոշում է կայացնում այն վեճի հարցով, որը կողմերը չեն կարողացել լուծել համաձայնության միջոցով: Միջնորդության դեպքում, չեզոք միջնորդը աջակցում է կողմերին վեճը համաձայնությամբ լուծելու հարցում: Եթե միջնորդությունը ձախողվում է, վեճը շարունակվում է:

### 1 Միջնորդության ընթացքը

Միջնորդությունը ոչ ֆորմալ է: Միջնորդության ընթացքը կախված է ներգրավված մարդանցից՝ կողմերից, խորհրդատուներից և միջնորդներից, և վեճի բնույթից: Մովորաբար, միջնորդը նախ առանձին հանդիպում է կողմերի հետ, ուսումնասիրում կողմերի իրական պահանջներն ու նպատակները և այնուհետև յուրաքանչյուր կողմի դիրքորոշումը հայտնում մյուս կողմին: Այս գործընթացը միտում ունի նվազեցնելու կողմերի դիրքորոշումներում առկա տարբերությունները, մինչև որ կողմերը կարողանան ընդհանուր համաձայնության գալ: Գործընթացը կարող է նաև հանգեցնել համընդհանուր համաձայնությունների, որոնք չեն սահմանափակվում միայն այն հարցերով, որի հիման վրա մեկնարկել է միջնորդությունը, այլ և ներառում են ավելի ընդգրկում խնդիրներ և երկարաժամկետ հարաբերություններ:

Գոյություն ունի միջնորդության տարբեր ոճեր: Որոշ միջնորդները ընդունում են բրոքերի դեր և պարզապես կողմերին հաղորդում միմյանց դիրքորոշումները մինչև նրանք ինքնուրույն հասնեն վեճի լուծմանը: Մյուս միջնորդները, գուցե միջնորդների մեծամասնությունը, նաև ստանձնում են գնահատման, ճշմարտությունը բացահայտելու՝ պարտականություններ: Մասնավոր հանդիպումներ անցկացնելով կողմերի հետ՝ միջնորդը ուսումնասիրում է կողմերի դիրքորոշումները, որպեսզի կարծիք կազմի, թե դատավորը կամ արբիտրը ինչպես կվերաբերի կողմերի դիրքորոշումների ուժեղ և թույլ կետերին, եթե կողմերը չկարողանան վեճը միջնորդությամբ հարթել: Կողմերի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ միջնորդը երբեմն ներկայացնում է իր գնահատականը գործի վերաբերյալ:

Միջնորդության հաջողությունը կամ ձախողումը կախված է ոչ միայն կողմերի բարի կամքից, այլ մեծ հաշվով նաև միջնորդի հմտություններից ու ջանքերից: Միջնորդը պետք է կարողանա ձեռք բերել կողմերի վստահությունը և իր ոճը համապատասխանեցնել միջնորդության պահանջներին: Եթե կողմերը

համաձայնվում են դիմել միջնորդության, ապա գուցե վեճը լուծելու ամենակարևոր քայլը միջնորդի ընտրությունն է:

Միջնորդությունը ամբողջովին կամովի է: Դրանք բացարձակապես կողմերի միջև համաձայնությունների արդյունք են: Սակայն, եթե կողմերը համաձայնվում են դիմել միջնորդության, ապա նրանք բարի կամքով պետք է հետևեն միջնորդության ընթացքին մինչև համաձայնության հասնելը, կամ մինչև պարզ դառնա, որ հնարավոր չէ համաձայնություն գալ: Կողմերի գրավոր միջնորդության համաձայնությունը, որը պետք է գրավոր լինի, նախատեսում է բոլոր այն ընթացակարգերը, որոնց ցանկանում են հետևել կողմերը: Համաձայնության մեջ նշվում է նաև միջնորդի համատեղ նշանակման կարգը և այլ ցուցումներ, որ կողմերը ցանկություն ունեն միջնորդին ներկայացնել: Լավ կազմված միջնորդության համաձայնությունը նախատեսում է նաև, որ միջնորդությունը գաղտնի է:

Եթե միջնորդությունը ձախողվում է և կողմերին չի հաջողվում համաձայնության հասնել, ապա կողմերը հայտնվում են նույն տեղում, որտեղ գտնվում էին նախքան միջնորդության մեկնարկը: Կողմերը պետք է լուծեն իրենց վեճը բանակցությունների, դատավարության կամ արբիտրաժի միջոցով: Եթե կողմերը միջնորդության համաձայնությամբ մեջ նախատեսել են, որ միջնորդությունը պետք է գաղտնի լինի, ապա կատարված հայտարարությունները, ներկայացված փաստաթղթերը կամ դիրքորոշումներ չեն կանխորոշում կամ սամանափակում կողմերի հետագա քայլերը: Կողմերը չեն կարող դրանք բացահայտել, իսկ դատավորը կամ արբիտրը հետագա դատավարության կամ արբիտրաժի ընթացքում չեն կարող քննել միջնորդության ընթացքում ձեռք բերված փաստերը, ներկայացված փաստաթղթերը կամ հաշտեցման առաջարկությունները, կամ որևէ այլ երևույթ, որ տեղի է ունեցել միջնորդության ժամանակ:

## 2 Միջնորդությունը կարգավորող կանոններ և օրենքներ.

Մի շարք հաստատություններ, այդ թվում Առևտրի միջազգային պալատը (ICC) և Ամերիկայի արբիտրաժային ընկերակցության վեճերի լուծման միջազգային կենտրոնը (AAA), մշակած ունեն միջնորդության ընթացակարգի կանոններ: ICC-ի և AAA-ի միջնորդության (հաշտեցման) կանոնները տեղադրված են Հավելվածներ Ա-3.1-ում և Ա-5.1-ում: Այս կանոնները հիմնականում պարզ և ընդհանուր բնույթի են լինում: Նրանք հաստատությանն են վերապահում միջնորդության կազմակերպման գործառույթը, ինչպես նաև միջնորդի նշանակման իրավունքը, եթե կողմերն այդ հարցում համաձայնության չեն գալիս: Սակայն պարտադիր չէ, որ կողմերը դիմեն այս կանոններին: Ընդունված է նաև, որ կողմերն ու միջնորդները կազմեն միջնորդության

ընթացակարգերը յուրաքանչյուր գործին համապատասխան, առանց դիմելու հաստատության կանոններին:

Միջնորդության համար անհրաժեշտ չէ հատուկ օրենք ունենալ: Շատ պետություններ ընդունել են միջնորդության կամ հաշտեղման մասին օրենքներ: Այնուամենայնիվ, Հայաստանը չունի նման օրենք, ինչպես բազում այլ երկրներ, որտեղ լայնորեն տարածված է միջնորդությունը: Շատ միջնորդություններ, որոնք անցկացվել են թե՛ համապատասխան օրենք ունեցող, թե՛ չունեցող երկրներում, հաջողության են հասել: Ընդհանուր առմամբ կարելի է սպասել, որ դատարանները կպահանջեն միջնորդությամբ կայացված համաձայնությունների կատարումը ըստ պայմանագրային իրավունքի հիմնական սկզբունքների, ինչպես նաև կհարգեն կողմերի որոշումը, որ միջնորդությունը պետք է լինի գաղտնի: ՀՀ դատարանները կողմերին քաջալերում են հաշտություն կայացնել: Երբեմն դատարանը իրականացնում է վեճի ոչ ֆորմալ միջնորդություն, կամ վեճը հանձնում է արբիտրաժի:

Մա չի նշանակում, որ միջնորդության օրենքը չի կարող դրական նշանակություն ունենալ այս հարցում: Նախ, այն հանգամանքը, որ տվյալ երկիրը ընդունել է միջնորդության մասին օրենք, արդեն հուշում է վիճող կողմերին և դատարաններին, որ միջնորդությունը վեճերին վերջնական լուծում տալու ճանաչված միջոց է: Դրանից գատ, միջնորդության մասին օրենքները հիմնականում նախատեսում են, որ միջնորդությանը վերաբերող գաղտնիության մասին համաձայնությունները պարտադիր են ինչպես կողմերի, այնպես էլ դատարանների համար: Առանց նման օրենսդրական դրույթի, դատարանների դիրքորոշումն այս հարցում կարող է այդքան պարզ չլինել: Միջնորդության մասին օրինակելի օրենքի օրինակ է հանդիսանում UNCITRAL-ի Միջազգային հաշտեցման մասին մոդել օրենքը, Հավելված Ա-6.1:

3 Միջնորդության առավելություններն ու թերությունները արբիտրաժի և կամ դատավարության համամետ.

Առավելություններ

- 1 Միջնորդությունը շատ ավելի արագ և էժան է:
- 2 Միջնորդությունը գաղտնի է և հիմնականում ոչ առճատային:
- 3 Միջնորդությունները կարող են աջակցել աշխատանքային հարաբերությունների հաստատմանը կամ վերականգնմանը, որոնք ուղված են դեպի ապագա և լուծում են մի քանի

փոխկապակցված հարցեր : Արբիտրաժն և դատավարությունը առնչվում են միայն կոնկրետ վեճից բխող խնդիրների հասցեգրմանն ու լուծմանը: Միջնորդության դեպքում, հմուտ միջնորդը կարող է օգնել կողմերին հարթել իրենց միջև առկա բոլոր տարբերությունները, անկախ նրանից, թե այդ տարբերությունները կապ ունեն այն վեճի հետ, որի հիմքի վրա մեկնարկեց միջնորդությունը: Միջնորդը կարող է օգնել կողմերին հասնել համընդհանուր հաշտեցման, որի հաշվի է առնում և հավասարակշռում է երկու կողմերի բոլոր շահերը:

### Թերություններ

- 1 Միջնորդությունը չի նախատեսում, և հաճախ չի ապահովում կողմերի իրավունքների գնահատման մանրակրկիտ վերլուծումը՝ ինչը տեղի է ունենում դատավարության կամ արբիտրաժի պարագայում: Այն պարզապես փորձում է հասնել փոխզիջման վրա հիմնված արդյունքի, որը կբավարարի կողմերին:
  - 2 Թեպետ միջնորդության արդյունքում կայացած հաշտության համաձայնությունը ընդհանուր առմամբ ենթակա է կիրառման, նրա կատարումը նույնքան հեշտ չէ պահանջել, որքան արբիտրաժային որոշման կամ դատարանի վճռի կատարումը: Եթե կողմերից մեկը հրաժարվում է հետևել միջնորդությամբ կայացած հաշտեցման համաձայնությանը, ապա մյուս կողմը կարող է դիմել դատարան պայմանագրի խախտման հայցով և դատարանից հայցել վնասահատուցում կամ պայմանագրի կատարում:
  - 3 Միջնորդությունը կարող է չհասնել արդյունքի: Այս դեպքում, կողմերը փաստորեն որոշ առումով վատնած կլինեն իրենց ջանքերը: Այնուամենայնիվ, չհաջողված միջնորդությունը նախապատրաստելու և իրականացնելու ընթացքում կատարված աշխատանքը կարող է օրինակելի լինել հետագա դատավարության կամ արբիտրաժի համար:
- 4 Միջնորդության վերաբերյալ հարցուպատասխան.
- 4.1 Գործարքի ո՞ր փուլում է նախընտրելի միջնորդության համաձայնության կնքումը:

Սովորաբար, կողմերը որոշում են միջնորդության դիմել միայն վեճի ծագումից հետո: Հաճախ նաև այնպես է ստացվում, որ կողմերը որոշում են միջնորդության դիմել միայն այն բանից հետո, երբ արդեն երկար ժամանակ է վեճի հարցով դատավարություն կամ արբիտրաժ է ընթանում: Այսպես սպասելով, կողմերը հնարավորություն են ստանում միջնորդության ավելի նպատակահարմար ընթացակարգ կազմել, որը կհամապատասխանի առկա պայմաններին: Տեսնելով, թե ինչպիսի պահանջներ են ներկայացվում դատավարության կամ արբիտրաժի ընթացքում՝ կողմերը գուցե ավելի շահագրգռվեն փորձելու միջնորդությունը որպես ավելի պարզ այլընտրանք: Այնուամենայնիվ, կողմերը հաճախ հենց գործարքի սկզբում, գործարքի հիմնական պայայմանագիրը կազմելիս են համաձայնվում, որ վեճի ծագման պարագայում նրանք ձգտելու են հարցը լուծել միջնորդության ճանապարհով: Նման համաձայնությունը հաճախ ներառում է դրույթ, որ որևէ կողմ չի կարող դիմել դատարան կամ արբիտրաժ մեկնարկել, քանի դեռ միջնորդություն իրականացնելու good faith փորձ չի եղել: Վեճի ծագումից առաջ նման համաձայնության կայացումը թույլ է տալիս կողմերին արագ և առանց ավելորդ ջանք թափելու սկսելու միջնորդության գործընթաց, եթե դրա անհրաժեշտությունը լինի:

#### 4.2 Միջնորդության համաձայնությունը ինչպիսի՞ դրույթներ պետք է ներառի:

Համաձայնությունը կարող է բավականին պարզ լինել: Կողմերը պետք է համաձայնվեն միջնորդությունը բարի կամքով իրականացնել և միջնորդության բոլոր հանգամանքները գաղտնի պահել: Եթե նրանք ցանկանում են հավելյալ մանրամասնել միջնորդության ընթացակարգը, ապա նախընտրելի է, որպեսզի նրանք ընդունեն համապատասխան հաստատությունների կանոնները միջնորդության կամ հաշտեցման վերաբերյալ (օրինակ, ICC-ի կամ AAA-ի կանոնները, կամ UNCITRAL-ի կանոնները հաշտեցման վերաբերյալ): Կողմերը նաև պետք է համաձայնության գան, թե ով է լինելու միջնորդը: Եթե չի հաջողվում համաձայնվել, նրանք կարող են դիմել ICC-ին, AAA-ին կամ այլ հաստատության աջակցությանը թեկնածուների հարցում: Եթե որևէ թեկնածու շուրջ համաձայնության չեն գալիս կողմերը, նրանց կարող են խնդրել հաստատությունից միջնորդ նշանակել: Միջնորդության կամ հաշտեցման վերաբերյալ ICC-ի, AAA-ի և UNCITRAL-ի կանոնները կարելի է գտնել Հավելվածներ Ա-3.1-ում, Ա-5.1-ում և Ա-6.2-ում:

#### 4.3 Ինչպե՞ս գտնել որակավորված միջնորդ:

Այս ոլորտում փորձառություն ունեն մի շարք իրավաբաններ և retired դատավարներ, որոնք ուսուցում են ստացել միջնորդության վերաբերյալ: Թեպետ 2007թ.-ի տվյալներով չկա արբիտրների որակավորման ինստիտուցիոնալ կարգ, առկա է համապատասխան շահագրգռվածություն, և Հայաստանը ամենայն հավանականությամբ կհետևի այլ պետությունների օրինակին, որտեղ կայուն հաստատված է միջնորդության պրակտիկան՝ որդեգրելով միջնորդների որակավորման ինստիտուցիոնալ կարգ: Ներկայումս, դատարանները և կամ փաստաբանները կարող են համապատասխան աջակցություն ցուցաբերել որակավորված միջնորդ գտնելու հարցում:

#### 4.4 Արհրաժե՞շտ է իրավաբանի աջակցությունը միջնորդությունը նախապատրաստելիս կամ իրականացնելիս:

Իրավաբանները միջնորդության դեպքում պակաս առանցքային դեր են կատարում, քան դատավարության կամ արբիտրաժի պարագայում: Համեմատար պարզ վեճերի դեպքում, կամ այն վեճերի պարագայում, որոնք չեն առնչվում մեծ գումարների հետ, կողմերը կարող են մասնակցել միջնորդությանն առանց իրավախորհրդատուի օգնության՝ հետևելով իրենց նշանակած միջնորդի ուղղություններին և ստանալով այն հաստատության աջակցությունը, որի միջնորդության կանոնները ընտրել են: Այնուամենայնիվ, հատուկ կարևորության կամ բարդության գործարքի կամ վեճի դեպքում, շատ կողմեր նպատակահարմար են գտնում դիմելու իրավաբանի աջակցությանը միջնորդության ընթացակարգը կազմելու, միջնորդության համաձայնությունը պատրաստելու և միջնորդությունն իրականացնելու հարցերում: Եթե միջնորդությունը գտվում է փորձառու միջնորդի ձեռքում, իրավաբանի դերը աստիճանաբար նվազում է միջնորդության ընթացքում, երբ միջնորդը սկսում է ավելի հաճախ դիմել կողմերին, որպեսզի վերջիններս ինքնուրույն սահմանեն իրենց նպատակները և նշեն այն հարցերը, որոնց շուրջ պատրաստ են փոխզիջման գնալ:

### 5 Վեճի լուծման այլ այլընտրանքային եղանակներ

Վերը նշված միջնորդության տեսակների հետ մեկտեղ, կան Վեճի լուծման այլ այլընտրանքային եղանակներ (ADR – Alternative Dispute Resolution): Ինչպես միջնորդության պարագայում, բոլոր եղանակները ուղղված են կողմերի վեճի հարթմանը համաձայնության միջոցով: Այս եղանակներից են.

5.1 Փոքր դատերը. Ըստ կողմերի և նրանց իրավաբանական խորհուրդների մշակած ընթացակարգի՝ իրավախորհրդատուները ներկայացնում են իրենց ամենաուժեղ փաստարկների հակիրճ տարբերակը երեք

անդամներից բաղկացած հանձնաժողովին, որը կազմված է յուրաքանչյուր կողմի ընտրած ղեկավարներից և հանձնաժողովը նախագահող չեզոք խորհրդատուից: Յուրաքանչյուր կողմը փաստարկները ներկայացնում է մեկ օրում կամ ավելի սեղմ ժամանակահատվածում, երբեմն գլխավոր վկաների կարճ վկայություններով և հնարավորինս ազդեցիկ ձևով՝ այնպես՝ ինչպես կարվեր դատարանում կամ արբիտրաժում: Այնուհետև, հաշվի առնելով դիրքերի ներկայացումից ստացած տեղեկատվությունը՝ կառավարման ներկայացուցիչները, չեզոք խորհրդատուի աջակցությամբ, ձգտում են բանակցությունների միջոցով հող պատրաստել կողմերի համաձայնության համար:

5.2 Փաստերի չեզոք արձանագրում. Կողմերը համաձայնվում են բարդ տեխնիկական հարցերով դիմել չեզոք փորձագետին՝ խնդրի շուրջ որոշում կայացնելու համար: Նախատեսվում է, որ այս որոշումը կաջակցի կողմերին հասնել վեճի լուծմանը բանակցությունների միջոցով: Կողմերի համաձայնությամբ է որոշվում, թե փորձագետի որոշումը պարտադիր կլինի, թե ոչ, և արդյոք այն կարող է ներկայացվել որպես ապացույց հետագա դատավարության կամ արբիտրաժի ընթացքում: Բազում արբիտրաժային հաստատություններ պատրաստ են աջակցել կողմերին որակավորված փորձագետներ գտնելու և փաստերի արձանագրման գործընթացը վերահսկելու հարցերում: Որպես օրինակ, տեսեք ICC-ի Փորձագիտության մասին կանոնները, Հավելված Ա-3.2:

5.3 Բանակցություններ. ADR-ի ամենահին և տարածված եղանակը վիճաբանող կողմերի միջև բանակցություններն են՝ իրավական խորհրդատուի աջակցությամբ կամ առանց:

Այլ ADR ընթացակարգեր. ADR-ի վերը բերված եղանակների և այլ ձևերի մասին տեղեկատվության համար, տեսեք Հավելված Բ-4, 'ADR in International Transactions':

## ՎԵՐՁՍԲԱՆ

ADR-ի զարգացումը համաշխարհային գործընթաց է: Այսօր աշխարհում աճում է այն առևտրային պայմանագրերի քանակը, որոնք նախատեսում են վեճերի հարթման այլընտրանքային եղանակներ, հիմնականում միջնորդություն կամ արբիտրաժ, կամ երկուսի ինչ-որ խառնուր: Կարևոր

---

\* © Markham Ball, 2007

միջազգային պայմանագրերի մեծ մասը, ինչպես նաև նույն երկրի երկու կողմերի միջև կնքվող բազում առևտրային պայմանագրեր ներառում են արբիտրաժային համաձայնությունները եւ վերապահումները:

Աստիճանաբար շատանում են առևտրային պայմանագրերի կողմերի քանակը, որոնք իրենց առևտրային շահերից ելնելով ընտրում են արբիտրաժը կամ միջնորդությունը վեճերը լուծելու համար: Նախընտրելի է, որպեսզի նման վեճերը լուծվեն արդյունավետ ճանապարհով և թուլատրեն գործարար մարդկանց շարունակելու զբաղվել ֆինանսական գործունեությամբ առանց ավելորդ խոչընդոտների:

Դատավորները նույնպես աջակցում են վեճերի լուծման այլընտրանքային եղանակներին, քանի որ դրանով կարող են ապահովել տնտեսական վեճերի արդար եւ արագ լուծումը՝ « արագացնել վեճերի լուծման արագացված ընթացակարգերը, եւ բարձրացնել դատարանների արդյունավետությունը» վստահություն ներշնչելով եւ խթանելով գործարարներին որ դիմեն վեճերի լուծման այլտրանքային եղականներին:

Ունենալով Արևտրային արբիտրաժի մասին նոր օրենք՝ Հայաստանը, իր գործարարները, իր իրավաբաններն ու դատարանները արդեն պատրաստ են մասնակցելու այս համախարհային գործընթացին: